2005, ԴԵԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 23 (211)

Բրիտանիայի Հայոց Թեմ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ՈՎ ՀԱԿԱՌԱԿՎՈՒՄ Է ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ՝ ՀԱԿԱՌԱԿ Է ԱՍՏՈՒՆ

«Մեր մեջ կգտնվին ոմանք, որոնք կուզեն ...ճանաչել Սուրբ Էջմիածնի դերը, կամ կապակցին իրենց հավատարմությունը Սուրբ Էջմիածնի ...ետ...»

(Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց)

Ամենակալ Աստծո նախախնամությամբ Սուրբ ...գինոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների ...գեղեցիկ ուղղվելիցին դեպ Արեւելք, դեպի բարձրիկ ...մարին Հայոց. առաքելական քարոզչությամբ ...մասաք ամենաառատ օրհնությունն ակունքներ ...նեան հայ կյանքում եւ ի հայս հորդարուխ հոսեկեղեցին Հայաստանյայց, որով ոռոզվեց հայությունը, շնչավորվեց ու կենդանագործվեց, դարձ...



...գավակ Բարձրյալի եւ մուտք գործեց Աստծո ...թյունն: Հիրավի, Հայոց երկրում աստվա...ոնկեն կորուսյալ Դրախտը վերագտնվեց, զի ...ամանակ Հայաստանը եկեղեցագործվելով դարձ... Երկիր Դրախտավայր, որի հենց սրտում, ինչ...ն Եղեմական պարտեզում, կենաստու ձեռամբ ...ավծողորդու տնկվեց Կենաց Ծառը՝ Մայր Աթոռ ...որ Էջմիածինը՝ ՏԱՆՁՐՆ ԱՍՏՈՆ, ՏՈՒՆՆ Ա...ԹՅԻ եւ ԱԹՈՌԸ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹՅԱՆ:

Արդարեւ, մերազնյա պաշտելի Մայր Էջմիածինը բազում խորհրդոց մի լույս խորհրդանոց է, ...ի նաեւ ամոքիչ է ու բալասան ամենայն ցաւ...ի ու վիրաց. ամենագետ է Աստված, եւ Ինքն է ...ում մարդկանց սրտերն ու երիկամները, եւ մի...այն Տիրոջ՝ նեն հայտնի գալիքի անցքերը... ...ավածային տնտեսության մեջ տեղի ունեցած ...ի դեպքը՝ Միածնի փառավոր էջրն ի Հայս եւ ...որ Էջմիածնի հիմնարկելը, կանխագետ Աստ...նամավոր շնո՛ղին է. Իր սեփական ժողովուրդը ...ոնած հայությանը: Եվ այդ մեծագույն պարգեւն ...ավածային եւաեւ այն բանի համար է, զի Բարին ...ոված գիտի, որ համայն տիեզերքում ազգային իր էության ողջ զորությամբ ու կարողությամբ Իրեն դարձած ու դավանած հայ ժողովուրդը, պատմության հանգրվաններում, ոսոխների հալածանքների ու մարդկային բնության տկարության հետեւանքո, տրոհվելով պիտի բեկորվեր, մասնատվեր: Եվ Բարերար Աստված Իր նախախնամությամբ Սուրբ Էջմիածինը հիմնեց, որով հայոց համար բացեց նաեւ դռուռը նեքի՝ որպես ապատում ու փրկություն գալիքի չարահարույց ու չարահնար բաժանումների փորձություններից: Ինչպես անապատում Սովսես մարգարեի հաստատած պղնձե օձը կենդանության պատճառ էր դառնում բոլոր նրանց համար, ովքեր անբարոյ աչքով դրան էին նայում ու ապավինում (Թվեր ԻԲ 4-9), այնպես եւ հայոց կյանքում պիտի ապրեն բոլոր նրանք, ովքեր պատմության բառուղիներում, սին ու մահաբեր հրապույրների ու համոզմունքների մեջ, չպետք է դադարեն հոգու անաղոտ աչքով ու աննենգ մտքով նայել ու ապավինել հանուր Հայոց Լուսո Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, որը լինելով ՄԻԵՎԵՆ հոգեւոր կենտրոնը Հայոց Եկեղեցու՝ բնորոշեն է Ամենայն Հայոց Քահանայապետության, իսկ սա էլ միակ վավերական թթխմորն է հայ ազգի սուրբ միության. «...Ամենայն Հայոց Կաթողիկոսն է կենդանի ճերմկայացուցիչը այն նուիրական գաղափարի, որ ի սփիւռս աշխարհի տարածուած բոլոր հայերը մի հոգեւոր միութիւն են կազմում, մի պատմական ժողովուրդ, որից բաժանուող հիրաքանչիր անհատ կորցնում է գոյութեան իրաւունքը եւ կեանքի նպատակը՝ ինչպէս մայր ցնից կտրուած մի ճիւղ, չոր խոշուերի կարգն է անցնում» (*Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան*):

Եթե Տիրոջ խոսքի համաձայն Իրնն այնտեղ է, նրանց մեջ, որտեղ Իր անունով միաքանվել են երկու կամ երեք հոգի (Մատթ. ԺԸ 20), հապա ո՞վ է Սուրբ Էջմիածնում, որտեղ Տիրոջ անունով եւ առ Աստված բազում աղերսներով ցկատարած աշխարհի «կապեալ կայ» համայն ազգն հայոց, բովանդակ Եկեղեցին Հայաստանյայց, ուրեմն ով, եթե ոչ Իրնը՝ Աստված է ներկա Սուրբ Էջմիածնում: Եվ քանի որ Արարիչ Աստծո պատգամով իսկ Սուրբ Էջմիածնում է հաստատված Ամենայն Հայոց Քահանայապետությունը, եւ որովհետեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որպես միակ վավերական հաջորդը Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների եւ առաքելաշավիղ Սուրբ Գրիգոր Լուսավորչի, ամփոփում է «Սուրբ Հոգու բոլոր շնորհների զեղումն», Ուրմից եւ բաշխվում է աստվածային շնորհն ու օրհնությունը հանուր հայությանը, ուստի Ամենակալ Տերը հայոց մեջ առհասվետ ներկա է միմիայն Սուրբ Էջմիածնով եւ աստվածային շնորհն ու օրհնությունն ի հայս ներգործում են միմիայն առաքելական Մայր Աթոռի գահակալի՝ Ամենայն Հայոց Հայրապետի միջոցով.

«Մայ է Աթոռ Սուրբ Լուսաւորչին,
Եպիսկոպոսաց աստ գան ձեռնադրին,
Իւր Աստուածութեան յայս Տաճարս բաշխին,
Որով աւրհնին ծնունդք աւազանին:
Ասա ամենայն շնորհքն ծաւալին
Յամենեսեան Հայոց աշխարհին...»

(*Հովսեփ Մյունեցի*),

Շարունակությունը՝ էջ 2

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

9 դեկտեմբերի
ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Սերգեյ Միրոնովին եւ նրան ուղեկցող պատվիրակությանը:

Ողջունելով բարձրաստիճան հյուրի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Հայոց Հայրապետը բարձր գնահատեց մեր երկու երկրների այն սերտ համագործակցությունը, որ առկա է տարբեր մակարդակների վրա եւ գանազան ոլորտներում, ինչն առավել ամրապնդում եւ զարգացնում է երկու ժողովուրդների միջեւ դարերով կերտված բարեկամությունը: Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց Հայաստանում Ռուսաստանի Դաշնության տարվա հաջող անցկացման առիթով՝ անդրադառնալով Ազգային ժողովում բացված ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի օրերին:

Իր հերթին ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Սերգեյ Միրոնովը, շնորհակալություն հայտնելով հանդիպման հնարավորության համար, անդրադարձավ այցի մանրամասներին եւ միջտարածաշրջանային համագործակցությանը սվիրված հերթական կոնֆերանսին:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ եկեղեցիների միջեւ առկա ջերմ հարաբերություններին եւ համագործակցությանը, կարեւորվեց նրանց առաքելությունը ժողովուրդների կյանքում: Հաստատվեց, որ միայն Աստծո հետ սպրող, իրենց կյանքը հոգեւոր արժեքների վրա խարսխող ժողովուրդներն են, որ ապրում են երջանկության եւ բերկրանքի մեջ:

Հանդիպմանը ներկա էին Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանը եւ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

Վաղարշապատի քաղաքապետին եւ ավագանուն

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նաեւ Վաղարշապատի քաղաքապետ Գագիկ Ավագյանին եւ քաղաքի ավագանու անդամներին:

Հայոց Հայրապետը հանգամանորեն անդրադարձավ Եկեղեցու առջեւ ծառացած խնդիրներին ու մարտահրավերներին, ժողովրդի կյանքում Եկեղեցու հոգեւոր առաքելությանը՝ հաստատելով, որ «հոգեւորով է պայմանավորված մեր բարեկեցիկ վիճակը, այլապես ձեռք բերված ամեն ինչ պիտի փոշիանա, եթե հոգեւոր-բարոյական արժեքներն ու հոգեւորը չենք դարձնում հիմքը մեր կյանքի»:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ ց Մայր Աթոռի կողմից Վաղարշապատում իրականացվող զանազան բարեգործական ձեռնարկներին, ինչպիսիք են՝ մանկական խաղահրապարակը Ներսիսյան անտառում, հայորդաց տունը, 200 տարեցների սպասավորող բարեգործական ճաշարանը, մանկական ատամնաբուժարանը: Նշվեց, որ առաջիկա տարում Մայր Աթոռի հովանու ներքո կսկսեն գործել որբանոցն ու ծերանոցը: Որոշակի նորոգություններից հետո քաղաքացիների համար կգործարկվեն նաեւ լողավազանն ու սպորտային խաղադաշտը:

Վեհափառ Հայրապետը կոկիր վերահաստատեց Մայր Աթոռի պատրաստակամությունը՝ հնարավորինս աջակցելու քաղաքապետարանին՝ տարբեր ծրագրեր իրագործելիսք:

Տես՝ էջ 2

ՈՎ ՀԱԿԱՌԱԿՎՈՒՄ Է ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ՝

Սկիզբը՝ էջ 1

ասեն՝ «Որպէս եղ զի իցեմ է գլուխ եւ ի մորուսն Ահարոնի, ի մորուսէն իցեմ է գրաւանս զգեստու նորա» (Սաղմ. ՃԼԲ 2):

Ուրեմն, վերստին բարձրաձայնենք ճշմարտությունը եւ ասենք՝ **աշխարհասփյուռ հայության հոգեւոր միությանվերմը Սուրբ Էջմիածինն է, իսկ այդ սուրբ միությունը կենսագործողն ու կենդանավետ պահպանողն Ամենայն Հայոց Սրբազնագույն Հայրապետն է:**

Հետեւապես, կամա թե ակամա մարմնավոր բաժանված վիճակի մեջ հայտնված մեր ժողովուրդը հարկ է, որ շարունակի անսալ ճշմարտությանը՝ ա-ներկրայորեն ապավինելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, որպեսզի ի մեջ աշխարհի անհոդդողդ մնա մեր ազգային-եկեղեցական հոգեւոր միությունը, սուրբ միությունը, որը մեր զորության, մեր հաղթության ու մեր հարատեւության ԱՆՕՌԽԱՐԻՆԵԼԻ առհավատչյան է: Ահա թե ինչու մեր թշնամիք, եւ դրանց կամակից ու գործակից մերազնյա մոլորյալները, որոնք հայի հարազատ ու ճշմարիտ նկարագրից, հավատամքից ու ոգուց ամբողջովին պարզված են, ինչպես անցյալում, այնպես եւ այսօր ուղղակի կամ անուղղակի հարվածում են մեր միության վեմին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Այդ խավարակուլ հոգիները, օտարենի բաղաբակաւ նողկալի խաղերին հագուրդ տալու համար, շահարկում են հայատյաց բաղաբակաւությամբ պատճառով դարեր առաջ ստեղծված «արեւմտահայություն» ու «արեւելահայություն» լուկ աշխարհագրական-վարչական անվանումները (որոնք այսօր, ցավոր, վերածվել են «հայաստանարեւակ»-ի ու «սփյուռքարեւակ»-ի), եւ նկրտում են աշխարհացրիվ, բայց մեկ ժողովրդի համար միակ հարազատ հայրենի Տունը՝ Մայր Հայաստանն ու Տիրոջ ողորմությամբ վերականգնյալ Հայոց Պետությունն «անհայրենիք պետությամբ» եւ համազգային միեղեն հարազատ հոգեւոր թնդրանը՝ աստվածաշեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հոգեւոր կենտրոնի պիտակ ստացած «չահուբաբեր վաճառատնով» փոխարինել:



ՀԱԿԱՌԱԿ Է ԱՍՏԾՈՒՆ

Դարերի ընթացքում մերազնյա կյանքն ապականած մեր իսկ միջի նենգամիտների դավադրություններով ծնված ու այդ ճիվաղներով իսկ սնված հնագույն իժը կրկին կենդանության ճչաններ է ցույց տալիս՝ սպառնալով մեր համազգային ու համեկեղեցական միությանը. օտարահակ տարրերն իրենց մերենայություններով ու սադրանքներով կրկին աշխատում են հայորդյաց՝ համազգային անխորտակելի միջնաբերդ Սուրբ Էջմիածնից դուրս հանել եւ անջատել Մայր Աթոռից, միով բաձիվ, նորից Սուրբ Էջմիածնին հակառակվելու ժարհության, դարձյալ Ամենայն Հայոց Հայրապետության հանդեպ հավատարմության եղծում:

Ֆիզիկապես բաժանված եւ տարաբնակ հայությունը որպես մեկ ժողովուրդ հավաքական ուժ է սոսկ հավատքով, հավատքի կյանքով եւ հայ ոգեղիմությամբ: Եվ եթե դրանք չանվեն բուն հոգեւոր ակունքից, ապա արդեն իսկ մարմնապես բաժանյալ մեր ազգը, կտրուիվի նաեւ հոգեւորապես, ինչը եւ հայության հավիտենական կորստի պատճառը կլինի: Ահա այս հանգամանքով էր, որ Մեծն Տրդատ արքան 311 թ. անպայմանորեն ընդդիմանում է ու պայքարի եկնում Արեւելյան Բյուզանդիայի տիրակալ Մաքսիմիանոս Դաժ կայսեր դեմ, եւ Մեծն Վարդան Մամիկոնյան 451 թ. նույն կերպ է վարվում Պարսից արքա Սասանյան Հազկերտի պարագայնի:

Ահավասիկ, այս նույն հանգամանքով է, որ մենք այսօր մեր խոնարհ ձայն ենք բարձրացնում եւ խոսք ուղղում մեր ժողովրդին, որ հոգիի ի բռին պայքար մղենք այն բոլոր ժանտագորների դեմ, որոնք նկրտում են մեզ բաժանել միմյանցից, զատել մեզ մեր Էությունից, անջատել մեզ Սուրբ Էջմիածնից, որով եւ զրկել աստվածային օրհնությունից ու պահպանությունից:

Մինչեւույն ընտանիքի հարազատ անդամն իր սուրբ օջախում երկպառակություն չի՛ սերմանի, իսկ Հայոց Եկեղեցու ննիրյալ ու հավատավոր զավակը, միանշանակ, բնավ չի՛ կամի բաժանվել Սուրբ Էջմիածնից. նա կգերադասի մահվան դառը բաժակն ըմպել, քան կտրվել իր հոգեւոր Ծնողից, Ով դարերի հոլովույթում անասելի տառապանքների ու նեղությունների մեջ մի ակնթարթ իսկ չդադարեց խնամարկել յուրածին զավակներին ի Հայաստան եւ ի Սփյուռս:

Արդ, եթե Հայոց Եկեղեցում կգտնվի մի միավոր, որ կփորձի իր «դարավոր», սակայն հնբնանգատակ ու հնբնաբաղ, ըստ այդմ էլ անհիասա, գոյությունը հիմնավորել ինչ-ինչ պատճառներով, պատմությունը եղծելով, գործված անօրենությունները անարդարորեն օրինական հռչակելով ու իրավասությանց նոր սահմանները գծելով, ապա այդպիսիին պարզապես պիտի ասենք՝ թեպ ո՞վ դայակ կարգեց հայ կյանքում, մի՞թե չգիտես, որ հարազատ Ծնողի հոգատարության ժամանակ, դայակի կամ ստնտուի պե՛տք չկա:

Շարունակությունը՝ էջ 4

Տես՝ էջ 1

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բելառուսի պաշտպանության նախարարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստան ժամանած Բելառուսի պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ Լեոնիդ Մալցեւին՝ ՀՀ պաշտպանության փոխնախարար Յ. Խաչատուրովի եւ ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մ. Դուլգարովոյի ուղեկցությամբ:

«Մեր ուրախությունն ենք հայտնում այն գեղեցիկ համագործակցության համար, որ իրականացվում է մեր երկու պետությունների միջեւ: Եվ մասնավորապես մեզ համար հաճելի է տեսնել, որ այդ համագործակցությունը իրականանում է նաեւ ռազմական ոլորտում», - ասաց Նորին Սրբությունը՝ մաղթելով, որ Աստված գորեղ պահի երկու պետությունների բանակները, որպեսզի հայ եւ բելառուս ժողովուրդներն ապրեն խաղաղության մեջ եւ երկրներն ունենան առաքելություն եւ զարգացում խաղաղ պայմաններում:

Գեներալ-գնդապետ Լեոնիդ Մալցեւը, շնորհակալություն հայտնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելելու հնարավորության համար, գոհունակությամբ նշեց երկու ժողովուրդների միջեւ առկա ջերմ հարաբերությունների մասին: Նա նաեւ անդրադարձավ Զինված ուժերի եւ Բելառուսի Ուղղափառ եկեղեցու միջեւ ստորագրված համագործակցության համաձայնագրին:

Հանդիպումն ընթացքում խոսվեց ՀՀ զինված ուժերում եկեղեցականների հոգեւոր սպասավորության մասին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը եւ ՀՀ ՁՈՒ հոգեւոր ծառայության առաջնորդ Տ. Նորայր աբեղ. Սիմոնյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳ

Գեւորգ Չ. ՉՈՐԵՔՉՅԱՆ

Կաթողիկոս Ամենայն Հայոց (Թե. 1868, կթող. 1945-1954)

ԿԱ՞Յ ԱՍՏՈՒԱԾ, ԵՒ ՈՐՊԷՍ Է ՆՐԱՆ ՀԱՒԱՏՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սկիզբը՝ թիվ 22

Եկեղեցու հայրերը շատ հրաշալի պատասխանում են այդ հարցին. նոցա բացատրութեամբ Աստուած նա է, որից հասարակաւոր կարող ենք բարիքներ յուսալ եւ մեր կարիքների մէջ ապաւիսել նրան: «Կա՛յ Աստուած» հարցի պատասխանը այն պատկերացումը չէ միայն, որ գոյութիւն ունի բարձրագոյն էակ, որից սկիզբ է առել աշխարհը, կամ անհասանելի միտք, որ աշխարհի իմաստուն կարգերի հեղինակն է, եւ կամ արդար դատաւոր, որ իր երկնային արդարութեամբ երկրի անարդարութիւնները պիտի հարթէ: Ոչ, մենք որոնում ենք մխիթարութեան աղբիւր, որ մեր ցաւերի եւ մահու ժամին մեզ յոյս ներշնչել կարողանայ:

Եթէ վերեւում յիշատակուած պատկերացումը Աստուծոյ գոյութեան մասին ճշմարիտ էլ լինի եւ ընդունելի, այն Աստուածը մեզ համար անբաւարար է: Նա մեր ցաւերի բուժողը չէ, նա մեզ մխիթարողը չէ: Մեզ ինչ շահ, որ աշխարհը Ամենակարողի կամքով ծնունդ առած լինի, երբ վաղը պիտի ոչնչանայ. չէ՞ որ գիտութիւնը ուսուցանում է, որ

տիեզերքի անհուն տարածութեան մէջ միշտ նորանոր արեւներ ու երկրներ յառաջ են գալիս եւ ոչնչանում: Ապա ուրեմն ինչ զանազանութիւն մանկան ստեղծագործութեան, որ թղթէ տներ է շինում յաջորդ րոպէին քանդելու համար, եւ այդ գերագոյն էակի արարչութեան մէջ, որ նոյնպէս սրեղծել է, որ վաղը ոչնչանայ: Մեզ ինչ շահ, որ տիեզերքի մէջ գոյութիւն ունեցող օրէնքները վկայեն, թէ կայ այնպէս մի բարձր միտք, երբ անդին պտղատու պարտէզները անարտօրէն կարկտահար ոչնչանում են, երբ տուն անխղճօրէն կայծակահար հրդեհւում եւ մոխրակոյտ է դառնում զրկելով մարդուն օթեւանից, երբ մահտարաժամը լափում է անյաւօրէն մարդու կեանքը եւ ոչնչացնում, երբ բնութեան մէջ գոյութեան կռիւն է իշխում, երբ թռչունները, ծուվի ձկներից, անտառի գազաններից սկսած մինչեւ մարդը: Մեզ ինչ շահ, որ աշխարհը կառավարում է մի անկաշառ դատաւոր՝ ապագայում միայն անարդարութիւնը պատժելու եւ բարին ու արդարը վարձատրելու համար, երբ երկրի վրայ անարդարութիւն է իշխում: Եթէ այս է ճշմարիտ Աստուծոյ պատկերը, մեզ մնում է միայն դողալ ու սարսել նրա առաջ եւ ոչ սիրել ու ապաւինել նրան:

Մենք այլ Աստուած ենք որոնում. մենք որոնում ենք մի գթասատ սիրտ, որ ողորմի եւ կարեկցէ մեր թուլութեանը. մի խնամոտ աչք, որ քնքոյշ հոգատարութեամբ հսկէ մեզ վրայ. մի պահապան աչք, որ հովանաւորէ եւ պահպանէ մեզ:

«Կա՛յ Աստուած» հարցով մենք կամենում ենք իմանալ, թէ կա՛յ արդեօք մի սիրող սիրտ, մի հաւատարիմ հոգի, որ անդեսանելիօրէն հովանաւորէ մեզ եւ ազատէ ամեն հոգսերից: Կա՛յ արդեօք մենը, որ բոլորիս հայրն է:

Մարդկութիւնը Աստուծոյ մասին միշտ այսպէս չէ մտածել, Աստծուն այսպէս չէ պատկերացրել: Այսպէս ըմբռնել, այսպէս պատկերացնել, սովորեցրեց մեզ եւ խօսելու հայմարձակութիւն տուաւ Յիսուս Քրիստոս: Նա՛ համոզեց մեզ, որ կայ Աստուած, եւ ճանաչել տուաւ Նրա էութիւնը: Նա՛ համոզեց, որ կայ Աստուած եւ Նա բոլորիս հայրն է ու մենք՝ Նրա որդիները, ուրեմն եւ միմեանց եղբայրներ: Նա՛ սովորեցրեց մեզ նաեւ Նրան ճանաչելու ճամփան. «Որ եդեալ զԻս, եդեալ զՀայր», «Հայր յԻս ես եւ ի Հայր եմ» (Յովի. ԺԴ 9, 10): Այս պարզ ճշմարտութիւնը տարիներ Յիսուսի հետ ապրողներն ու Նրան աշակերտողները չէին հասկացել եւ հարցդին. «Յո՛յց մեզ զՀայր, եւ շատ է մեզ», ու յանդիմանուեցան. «Այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, եւ ո՞չ ծանեար զԻս, Փիլիպպէ՛»: (Յովի. ԺԴ 8, 9):

Շարունակությունը՝ էջ 3

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՊԵՏՐՈՍ Ա ԳԵՏԱԴԱՐՁ
(1019-1058)

Սկիզբը՝ թիվ 12-14, 21

Այսրկովկասում գոյություն ուներ նաեւ Ափխազա-Վրացա-աղվանից միացյալ թագավորությունը, որի մեծ մասին իշխում էր Օրբելյանների նախնի Լիպարիտ իշխանը: Հայկական մի խամաճիկ ուներ Ալոր Ալծրուկիների, գոյություն ուներ Սեբաստիայում, որտեղ Սեւեւեբքիրի հաջորդ Դավթի մահից հետո թագավորել էր նրա եղբայր Ա-ղոմը՝ կառավարչակից ունենալով իր եղբայր Աբուսահիլին: Ալնի թագավորությունում, քանի դեռ կեն-դանի էր Հովհաննես-Սմբատը, հա-մերաշխ համագործակցում էին Պետրոս Գետադարձը, Վեստ Սարգիսը եւ Գրիգոր Պահլավունին, սակայն նրա մահից հետո, երբ իշխանությունը հայտնվեց հիշյալ եռյակի ձեռքում, նրանց հաներաշխությունը վերջ գտավ: Համապետական հարցեր բարձրացնելով՝ իրականում նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր առավելագույնս անձնական օգուտներ ստանալ: Պետրոս Գետադարձը Կիրակոս եռեցի առք ու վաճառքից հետո հասկանում էր, որ այժմ պետք է Ա-նին հանձնել կայսրությանը եւ բյուզանդացիների հովանավորության տակ անցկացնել կյանքի մնացորդը: Վեստ Սարգիսը, ընդհակառակը, կամենում էր իր ձեռքը ձգել Ալնի թագավորությունը՝ թեպետեւ բյուզանդացիների հովանավորության ներքո, իսկ Գրիգոր Պահլավունին, որի վրա հրապես ազդում էր կրկին քաղաքական ասպարեզում հայտնված ժեռունի հորեղբայրը՝ սպարապետ Վահրամ Պահլավունին, չէր կամենում Ալնին եւ երկրին օտարին հանձնել եւ այդ նպատակով հորեղբոր հետ միասին գինում էր բանակը՝ հասցնելով այն 30 հազար մարդու: Դեպքերն այնպես դասավորվեցին, որ Վեստ Սարգիսը, լինելով երկրի հազարապետ, հարմար պահ ընտրեց, տիրացավ արքունի հարստություններին եւ ուղարկեց դրանք իր տիրույթները՝ Աբխազաց թագավորության սահմանագծին: Նա հատուկ որոշել էր տիրանալ թագավորական գահին:

Կաթողիկոսը գտնվում էր ծանր կացության մեջ: Պարտավորված լինելով բյուզանդացիների առաջ՝ նա բավականաչափ խելք ուներ, որ բացարձակ դուրս գար ժողովրդի եւ նախկին դաշնակից Գրիգոր Պահլավունու ու նրա հորեղբայր Վահրամ Պահլավունու գլխավորած քաղաքական ուժերի դեմ: Հասկանալի է, որ նման պայմաններում եռյակի միասնությունը խախտվեց: Վեստ Սարգիսը, որ իրեն առանձնապես ամուր չէր զգում եւ իր հետագան չէր պատկերացնում առանց բյուզանդական աջակցության, նրանց հրավիրեց Ալնին գրավելու, որի դռները նա խոստանում էր բացել բյուզանդացիների առաջ: Դժվար չէ տեսնել, որ այդ խնդրում նա գործակից ուներ կաթողիկոսին, սակայն Հայաստանի անկախությունը պահպանողների թեւը գնալով ուժեղանում էր, եւ խորամանկ կաթողիկոսը չհամարձակվեց բացահայտ հանդես գալ անկախության կողմնակիցների դեմ: Դեպի Ալնի շարժվեց քսան հազարի չափ բյուզանդական զորաբանակ, որը հայիոյանքներով ու հայերին ուղղված նախատինքներով հարձակվեց քաղաքի վրա՝ փորձելով տիրել Ա-նին: Դրան ի պատասխան՝ Ալնի պաշտպանները կատաղորեն հարձակվեցին բյուզանդացիների վրա եւ նրանց խայտառակ պարտության մատնեցին եւ այնպիսի կոտորած կազմակերպեցին, որ Վահրամ Պահլավունին կարգադրեց դրան վերջ տալ: Ըստ երեւույթին՝ ջարդը բյուզանդացիներին լուրջ ահաբեկել էր, եւ նրանք երկար ժամանակով մոռացան Ալնի ճանապարհը: Օգտվելով այդ խառնակ վիճակից՝ Ալնին փորձեց տիրանալ Լոռու թագավոր Դավիթ Ալհորդինը, որին Ալնի թագավորությանն՝ Լոռիին սահմանակից մի շարք գավառներ խոստացել էին նրա իշխանությունը: Դժվար է ասել, թե օրինական թագաժառանգին պաշտպանելն էր պատճառը, թե՞ կային այլ շարժառիթներ, սակայն Ալնի բնակչությունը չընդունեց նրա իշխանությունը, իսկ Վահրամ Պահլավունու բանակը նրան պարզապես հետ մղեց:

Անկախության կողմնակիցները՝ լինի Վահրամ Պահլավունի սպարապետը, Գրիգոր Պահլավունին կամ Մագիստրոսը եւ ուրիշներ, հիանալի հասկանում էին, որ միճանկը կարող է կայունանալ Կագիկ Աշոտյանին գահ բարձրացնելով: Նրանք Ալնի բերեցին պատանի արքայազնին եւ թագավոր օծեցին: Այս ամենը բոլորովին չէր մտնում Պետրոս Գետադարձի պլանների մեջ, սակայն նա ստիպված էր ոչ միայն դա հանդուրժել, այլեւ կատարել թագավորի օծումը, որը տեղի ունեցավ 1043 թվականի սկզբներին, ըստ Մ. Օրմանյանի՝ մարգաց ամսին: Դատելով ամեն ինչից՝ նրը Վահրամ Պահլավունին իր ձեռքը վերցրեց սպարապետությունը, Գրիգոր Մագիստրոսը վարում էր երկրի կառավարությունը կամ գործակալությունները: Պահլավունյաց տոհմի ներկայացուցիչները դարձան թագավորության վերջին նեցուկը:

Գագիկ Բ-ն շատ շուտով ի հայտ բերեց քաղաքագետի լուրջ ունակություններ՝ վստահություն ծնելով իր նկատմամբ եւ պետության ապագայի: Որոշ աղբյուրների համաձայն՝ Վեստ Սարգիսը վախից ամրացավ Ալնի միջնաբերդում, սակայն Գագիկը տիրեց միջնաբերդին, ձերբակալեց նրան ու հետ գրավեց արքունի գանձերը: Այլ տվյալների համաձայն՝ Վեստ Սարգիսը փախավ **Սարմոսի** քաղաքը, որը պաշարվեց Գագիկ Բ-ի զորքերի կողմից եւ շուտով գրավվեց: Վեստ Սարգիսը ձերբակալվեց եւ ուղարկվեց Ալնի: Սակայն նա զարմանալիորեն չպատժվեց, եւ անգամ նրան վերադարձվեց իր պաշտոնը: Այս ընթացքում բյուզանդացիները եւս չորս անգամ արշավեցին Ալնի, սակայն չնայած տեղ գտած ավերածությանն ու գերեվարությանը՝ մշտապես պարտություններ կրեցին Վահրամ Պահլավունու կողմից: Պատերազմական գործողությունները ղեկավարում էր ոչ միայն սպարապետը, այլեւ Գրիգոր Մագիստրոսը եւ, իհարկե, թագավորը: Շուտով հնարավոր եղավ խաղաղություն երկրում վերականգնել:

Երբ թվում էր, թե երկրում ամեն ինչ կարգին է, չհապաղեցին գործել երկրի դավաճանները: Վեստ Սարգիսը իր նկատմամբ հանդես բերած մեծ ներողամտությունից հետո փոխանակ երախտագիտությամբ լցվելու դեպի թագավորը, շարունակում էր իր հանցագործ գործունեությունը եւ կամենում էր Ալնին բյուզանդացիներին հանձնելու միջոցով իր համար բարձր դիրք ստեղծել: Առանձնապես դժվար չէ եզրադրել, որ նրան համագործակցում էր Պետրոս Գետադարձ կաթողիկոսը:

Շարունակությունը՝ էջ 5

Գեւորգ Չ. ՉՈՐԵՔՅԱՆ

Կաթողիկոս Ամենայն Հայոց (Օն. 1868, կթող. 1945-1954)

Սկիզբը՝ էջ 2

ԿԱ՞Հ ԱՍՏՈՒԱԾ, ԵՒ Ո՞ՐՊԷՍ Է՝ ՆՐԱՆ ՀԱՒԱՏԱԼՈՒ ՀԱՄՓՈՒՆ

Այսպէս ուրեմն, Յիսուս տուաւ Աստծուն ճանաչելու ճանապարհը: Պարզենք ուրեմն, թէ ո՞վ է Յիսուս: Կարդացէք Աւետարանը եւ կը լսնրուեք, որ Նա մի բարձր Միտք է՝ հանարեղ ու հնարագէտ, ճշմարիտը որոնող եւ ամէն գաղտնիքների խորը թափանցող: Նա մի բարձր Կամք է՝ միայն բարին ու ճշմարիտը կամեցող: Նա մի աննման Սիրտ է՝ բառերեւմամբ եւ սիրով լցուած դէպի մարդը եւ դէպի ամբողջ բնութիւնը: Մարդկային մտքի, սրտի եւ կամքի կատարեալ ապիպը. ահա՛ Յիսուս: Բարութեան, ճշմարտութեան եւ սիրոյ մարմնացումը. ահա՛ մեր Վարդապետը, մեր Փրկիչը, ապա ուրեմն ահա՛ եւ մեր որոնած Աստուածը:

Ով ունի զգայուն սիրտ, որ սիրով բաբախում է մարդու համար. ով ունի արթուն խիղճ, որ վկայում է, թէ դրամն ու գոյքը, թանչին ու հաճոյքը չէ բարձրագոյն բարիքը, այլ քան այդ ամէնը բարձր է իրաւունքն ու արդարութիւնը, ճշմարտութիւնն ու սէրը. ով ունի վեհութիւնն ըմբռնելու, նա կը մօտենայ Յիսուսին, բայց չի հարցնի, թէ կա՞յ Աստուած, այլ կը տոքէ եւ կերկրպագէ Նրան: Այդպիսիին կը խոստովանի, որ գտել է նրան, որի վառուց որոնում էր իր հոգին, եւ սրտով կը ընդունեն, որ կայ Աստուած:

Ով կամենում է համոզուել, որ կայ Աստուած, պէտք է Յիսուսի շունչը շնչէ, Նրա հոգին ճաշակէ: Իմաստուն խօսքերն ու դատողութիւնները ընդունակ չեն երբեք մեզ համոզել, որ կայ Աստուած, միտքը չէ առաջնորդում մեզ դէպի Աստուած, այլ ազնիւ հոգին եւ զգայուն սիրտը:

Նայի՛ր, ո՛վ մարդ, մարմին եւ արիւն առած՝ կանգնած է առաջդ Մարդու Որդին: Նա կանգնած է քո առաջ նաեւ Իր մահուան պաղկերով, եւ սակայն Իր անարգական ու գեանչական մահուամբ՝ Իր յաղթական փառքն է արդարացրում, որովհետեւ Նա գեանչուել է ու խաչ ելել ճշմարտութեան հաւատարիմ լինելու, ո՛վ ճնշուած, կեղեքուած ու հալածուած մարդ, քո արդար շաները պաշտպանելու եւ քեզ դէպի ճշմարտութիւն ու փրկութիւն առաջնորդելու համար:

Նա կանգնած է քո առաջ Իր կեանքով, Իր վարդապետութամբ եւ Իր գործերով, որ մարմնացած սէր է, անձնուէր բարեկամ ու հաւատարիմ ընկեր մարդուս:

Ուրի՞նք մեր սրտում բարութիւն, ճշմարտութիւն ու սէր եւ ընդունա՞ն ենք մարմնացնելու այն՝ կեանքի մէջ, անշուշտ կենդանի է մեր մէջ Յիսուս ու մենք կը տեսնենք Աստծուն եւ մեր, եւ բնութեան մէջ, եւ կը զգանք, որ Աստուծոյ որդիներ ենք ու միմեանց եղբայրներ:

Ահա Նա է, որ ներքնապէս պիտի համոգէ քեզ, թէ կայ Աստուած: Մի ճանապարհ ունինք միայն անտեսանելի Աստծուն ճանաչելու, եւ այդ ճանապարհը Յիսուս Քրիստոս է: Մի փասէ ունինք միայն անտեսանելի է: Մի փասէ ունինք միայն անտեսանելի Աստուծոյ գոյութիւնը ապացուցանելու, եւ այդ ապացոյցը Յիսուս Քրիստոս է:

Ով կամենում է Աստծուն վկարել աշխարհից, նա նախ Յիսուսին պիտի վկարէ աշխարհից ու պատմութիւնից: Քանի Յիսուս կ'ապրի մարդու սրտում, քանի Նրա պաղկերը կենդանի լինի մեր հոգու մէջ, նաեւ Աստուած կ'ապրի մարդու սրտում եւ նա աշխարհի մէջ:

Թէ ինչ ոյժ ունի Յիսուսի սիրոյ թոյլ փայլն անգամ ասպուանծաճանաչողութեան կարամամբ, պատմեմ ձեզ մի պատմուածք: Քահանայի մէկը այցելում է իր ծուխին. նա այցելում է մի մարդու, որ շաբաթներէ ի վեր անռանց աշխատանքի էր մնացած: Աղքատութիւնը իշխել էր տանը. նա, գլուխը երկու ձեռների մէջ առած, փխուր նստած է սեղանի առաջ: Պատրուհանի անկիւնում կանգնած է նրա միակ միմիարիցը՝ օղու շիշը: Քահանան սկսում է խօսել. մարդ չպէտք է կորցնէ արիութիւնը, պէտք է յոյսը Աստուծոյ եւ գալիք լաւագոյն ժամանակների վրայ դնէ: Մարդը կարաղում է. բռունցքով հարուածում է սեղանին եւ ասում. «Ինչո՞ւ են պէտք այդ անմիտ խօսքերը. եթէ Աստուած օգնել կամենար, կարող էր, շաբ ժամանակ ուներ: Այժմ իմ բազուկն է իմ Աստուածը. կը փրի բազուկս, կ'ոչնչանայ նաեւ Աստուածս»: Քահանային մնում էր լռելեայն թողնել եւ հեռանալ, որպէսզի նրա բարկութեան աւելի գոնեին պտղուներն էլ չվայելէր: Եւ այդպէս էլ արաւ. սակայն նրա անմիջապէս գործն եղաւ աշխատանք գտնել եւ վաստակաւոր աշխատանք: Եւ յաջողեցաւ նրան: Իսկ հեկեւանքը. մարդն արցունքներն աչքերին գալիս է քահանայի մօտ, խոստովանում է՝ ասելով թէ՝ «Այժմ գեանում եմ, որ Աստուած կայ», եւ ապագայում էլ պահում է այդ հաւատը: Հասկանալի է, որ քահանան Յիսուսի ներողամտութեան շունչը եւ Նրա սիրոյ հոգին, թէեւ փոքր չափով, բայց ունէր իր մէջ: Նա անարգանքը տարաւ եւ փոխարէնը սէր ցոյց տուաւ, եւ այդ սէրը յաղթեց մարդու հոգու մէջ ծնունդ առած անաստուածութեան:

Տո՛ւր մեզ, Տէր, հոգեւորականներիս, Յիսուսի շունչն ու հոգին, որ Նրա մարմնացեալ կենդանի պաղկերը հանդիսանանք: Ջօրաւցուր նաեւ մեզ, Տէր, որ մենք էլ թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով Յիսուսի քարոզած ու մարմնացրած սիրոյ քարոզիչներն ու վկաները դառնանք, որ դէպի Յիսուս առաջնորդել կարողանանք հաւարդ կարօտ մարդկութեանը: Այդ է միակ ճամփան՝ համոզուելու եւ ուրիշներին համոզելու այն մեծ ճշմարտութեան մէջ, թէ կայ Աստուած:



ՀԱՅ ՊԿՊՄ, ֆ. 454, ց. 1, գ. 55, թ. 1-7, ինքնագիր, բնագիր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ

ՍՏԵՂԾԳԱՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես Երզնկացին թողել է բավականին հարուստ ժառանգություն՝ թվով հարյուրից ավելի երկ, որոնք ունեն ոչ միայն գրական, այլեւ գիտական, պատմագիտական, բանասիրական, մշակութաբանական նշանակություն: Կանոնադրառնանք նրա գրական երկերին, որոնք իրենց հերթին ներկայանում են ժանրային հարուստ ընդգրկումով՝ հայրեներ, տաղեր, շարականներ, ներբողներ, չափածո տրակտատներ եւ այլն: Նրա ստեղծագործությունը նպատակահարմար է ներկայացնել ոչ թե ըստ բովանդակության խմբավորման, այլ ըստ գրական տեսակների:

ՏԱՂԵՐԸ

Հովհաննես Երզնկացու տաղերը բովանդակային առումով բավականին հարուստ են՝ աշխարհի փիլիսոփայական ճանաչում, սեր, հավատ:

ՏԱՂ ՀԱՎԱՏԻ

Երզնկացին հոգեւորական էր եւ հոգեւոր գործիչ, ուստի բնական է, որ նրա ստեղծագործությունը պետք է կենսավորվեր հավատի երգերով: Դրանց բովանդակությունն ընդհանուր է եւ հարազատ միջնադարում լայնորեն տարածված հաամանման տաղերին: Մեղքի խոստովանություն եւ հոգու փրկության հույս՝ այս կառուցվածքը որոշիչ է բոլոր գործերի համար:

Ամեն ինչ սկսվում է հոգու եւ մարմնի հավերժական վեճին լուծում գտնելու անհրաժեշտության գիտակցումից: Այդ պահանջով՝ ակնարելի կարելի դարձնելու մտադրությամբ է գրված «Յոհաննես վարդապետի ասացեալ Պլգոյ» տաղը.

Երկուսն ի մի տեղ բերած զերթ ընկեր կասեն թէ պահէ,
Ու յորս բընութիւն աւտար հետ իրաց կասեն թէ սազէ,
Հինգ դուռն է ի բաց թողած, զայդ ամուր կասեն թէ փակէ,
Չիս հոգան ի յայսոց միջին զերթ կըրակ ըզմոմն կու հալէ:

Հաջորդ տներում նա բացում է այս գաղտնագիրը: Երկու ընկերներից մեկը հող (մարմին), մյուսը հոգի է: Հոգին վերեւ է տանում, հողը՝ ներքեւ: Եթե հողին լսի՝ հոգու լույսը կպակասի, իսկ եթե հոգուն դառնա, ապա նա տունը շատ հեռու է, որ նշանակում է, թե՝ նրան հասնելը շատ դժվար է: Հոգու եւ մարմնի վեճի հարցն է սա, որոնցից մեկին պետք է նախապատվություն տալ, մինչդեռ ուժը դրանց միասնության մեջ է:

Բնության չորս տարրերը ի մի բերել չի լինի, որովհետեւ ամեն մեկն իր կողմն է քաշում: Ըստ նրա՝ հողը, ջուրը, քամին եւ կրակը «սիրելի չարկամ» են, որոնց մեկտեղել հնարավոր չէ, բայց դարձյալ դրանց միասնության մեջ է աշխարհի ուժը:

Հինգ դուռը հինգ զգայարաններն են, որ ներկայանում են ստորեւ մեջբերվող պատկերի մեջ: Միջանկյալ նշենք, որ հինգ զգայարանների մասին նա ակնարկում է նաեւ Գրիգոր Լուսավորիչին նվիրված ներբողի մեջ: Նկատի ունենալով նրան՝ գրում է. «Որ պատեալ էր սրբութեամբ ի ներքուստ ոգւով, Եւ արտաքուստ՝ մարմնով, Եւ ի հինգ զգայութիւնս մարմնոյն...»: Ահա քննարկվող տաղը.

Հինգ դուռն է ի բաց թողած, թէ՝ Փակէ, որ զոր լքմտէ,
Այս բերդս է զանձով ի լի ու հազար չարկամ կու մըտնէ,
Չարկամս ես ի յիս ունիմ, որ զդըուիս զամեն կու բակէ,
Չթագաւորս որ ի ներս նըստէ, նա սա այլ զոզըն կու խաբէ:

Այս տաղի ներքին իմաստը աշխարհի փիլիսոփայական միասնությունն է, որի կարեւոր նախադրյալը հեղինակի համար հոգու եւ մարմնի անքակտելիությունն է: Այդ մտայնությամբ էլ նա ավարտում է տաղը.

... Աստուած է՞ր հոգի ստեղծել ւ՛ ի հողոյ մարմին կապել է,
Կարծեմ վասն այնոր արար, թէ ի վեր քարշել զնա կարէ,
Կամ զհոգին ի մէջ մարմնոյն քան զիսալաս ոսկի նա զուգէ:

Այսինքն՝ հոգին մարմնի մեջ մաքուր ոսկի է: «Յոհաննես Մեծի մականուն Պըլուզ, ասացեալ ի խնդրոյ Յակոբայ մանկտաւագի Եզընկացոյ» տաղում (216 տող) նախ բանաստեղծն է դիմում Երզնկայի «Երբայրության» ղեկավար՝ մանկտավագ Յակոբին, թե՝ «Յակոբ, զարթի՛ր ի քնոյ մեղաց»: «Այդ որ զերսուն տարիդ լըցեր, Այլ մի՛ կենար մեղացդ ընկեր, Մերոյ ասա տիւ եւ գիշեր, Յակոբ, զարթի՛ր ի քնոյ մեղաց»: Այնուհետեւ խոսում է Յակոբը եւ խնդրում. «Թո՛ղ ինձ զմեղս իմ շատ ու չար»: «Զարթո՛ գիս, տե՛ր, ի քնոյ մեղաց» տողի կրկնեցող Յակոբը մեղքերի թողություն է հայցում եւ դիմում տիրոջը.

Յաստ՛ի, դարձո՛, զմոլորեալս,
Խնդրեա՛ եւ գի՛տ ըզկորուսեալս,
Օգնեա՛, կանգնեա՛ ըզգլորեալս.
Զարթո՛ գիս, տե՛ր, ի քնոյ մեղաց:

Հավատի փառաբանություն է նաեւ, նորին Յոհաննի վարդապետի Եզնկացւոյ ասացեալ ի խրատ աշխարհականաց» տաղը (252 տող): Այն ըստ էության փոքրիկ պոեմ է՝ նախադրությամբ եւ երեք հիմնական ասելիքով՝ սեր ուսման հանդեպ, Աղամի ու Եվայի արտաքսում դրախտից, Քրիստոսի ու հավատի փառաբանություն: Նախադրության իմաստն արտահայտում է այս տունը.

Ես տկար Յովհանէս հոգով տաքապէ,
Կարաւտած եմ բանի, որ չեմ լիացել,
Յաշխարհիս եմ կացել, մեքալք ըմբորել,
Ու զանձէն հոգեւոր առքաւ մընացել:

Երզնկացին խոսքը շարունակում է ուսմանդերի ու նշանակության խրատով: Ըստ նրա՝ մանուկների ուղեղը մոմի պես կակուղ է (անդրել տախտակ), որը ձեւ ու կերպարանք կստանա նա ուսումով: Այստեղ նա ներկայացնում է ուսուցման իր մեթոդը.

Թէ կամիս, որ կրթես զմանուկն ի բարի,
Դու լքկամ դիր բերնին, որ շատ չխուսափի,
Յամառթոյն, չերկիւղէն, յահեն թե լինի,
Չգայարանքն իւր պահէ, որ վայր չվթաի:

Ըստ նրա՝ ուսումասեր մանուկները Աստծուն եւ մարդկանց սիրող են, նրանք հոգով մաքուր են, սուրբ են ու առաքինի, մտքով իմաստուն, բնությամբ՝ բարի: Գանձն ու գահը ժամանակավոր արժեքներ են իմաստության հանդեպ, իսկ «Իմաստուն մարդն» «սուրբ կամ մաքուր է ամպէ»:

Իմաստության պտուղը ճաշակելուց եւ դրախտից վտարվելուց հետո՝ մարդկության Փրկիչն է դառնում ուղեցույց, որ հավատ է ներշնչում. «Եղեղեցիկ ես հավատ, զինչ գծան ծառկած»: Հավատը մայր է բարի գործերի: «Ճշմարիտ հաւատով զաստուած սիրեցք», - պատվիրում է բանաստեղծը եւ ավարտում խոսքը:

Հոգեւոր երգերն ունեն խրատաբարոյական խոսական բնույթ: Երզնկացին հավատավոր քրիստոնյայի դաստ է տալիս: «Տաղ ոգեշունչ խիստ գեղեցիկ ի յաւգուտ եւ ի խրատ իմաստնոց եւ կատարելոյ» գործում մեղքից հեռու մնալու պատգամներ է հղում: «Չալեւոր ծերըն պոռնիկ եւ որ ոտ սիրէ զգարդ, Ստոփուելնըն պարոնիկ անվայելուչ է, Ազգաւոր՝ տիկն հըպարտութիւն գործ սատանի է, Ծերոին պոռնըկութիւնն յոյժ ատոտերի է...»: Մեղքը, ըստ նրա, սկզբում «քաղցր է՝ և անուշ, յետոյ դառնանայ»:

Շարունակությունը՝ էջ 7

Սկիզբը՝ էջ 2

Այլ հարց է, որ եթե Ծնունդ ի գոյու չէ յուրածին զավակներին խնամածու լինել, այդ դեպքում Նրան եւ յուրածին զավակներին հարկավոր է թե՛ դայակի եւ թե՛ ստնտուի ծառայություն: Բայց ստուգ է եւ հայտնի՝ ամենեցուն, որ հայ կյանքում եւ ոչ մի ժամանակ կարիք չի՛ եղել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը պետք ունենան «դայակի» կամ «ստնտուի», զի Ամենայն Հայոց Հայրապետությունն առհավետ ի գոյու է անհրաժեշտ սնունդը մատակարարելու իր հոգածության վիճակ հանյալ հայ ժողովրդին, որ ի Հայաստան եւ որ ի սփյուռս աշխարհի: Ըստ այսմ, բոլոր նրանք, ովքեր առանց Սուրբ Էջմիածնի հավանության ու օրհնության փորձում են զարատուղի միջոցներով «խնամատար» դառնալ հայությանն այստեղ կամ այնտեղ, ապա դրանք, միանշանակ, ինքնակոչ «դայակներ» ու «ստնտուներ» են, որ նմանվում են այն մտագարներին, որոնք այնոց մանկանց հափշտակելով՝ ծնող եւ ձեւանում եւ փոքրիկների կամքին հակառակ հանդգնում նրանց մասին «հոգ տանեն»...:

Տիրոջով ենք վկայում եւ մեր-ազգային պատմությամբ փաստում, որ նա, ով հակառակվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ հակառակ է Աստծու, իսկ Սուրբ Գիրքն ասում է. «...Որովհետեւ երկ ազդ խորհուրդ կամ այդ գործը մարդկանցից է, կրանգի, իսկ եթե Աստծոյ է, չեք կարող դրանը ձախողեցնել. մի գուցե աստվածամարտ էլ դառնաք» (Գործք Ե 38-39): Այդ, ով ակամբ ունի լսելու, թող խելահասու լինի, բանզի Սուրբ Էջմիածինը եւ Ամենայն Հայոց Քահանայապետությունը, ոչ թե մարդկային հնարանք են, այլ ԱՍՏՎԱԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՍՏԱՏ:

Սուրբ Էջմիածինն է հայոց ամենազոր ու սահմաքելի ոգին, իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայոց Եկեղեցու Գերագույն Պետն այդ ոգու մշտապրում ներկայն է ու պահապանը: Այս ոգով է հայությունը միասնական, այս ոգով է աշխարհասփյուռ հայ ժողովուրդն իր Մայր Եկեղեցու մեջ եւ այս ոգով է համայն հայությունը խարսխված Մայր Հայրենիքին: Հետեւաբար, հայությանն, կամ նրա մի մասին Սուրբ Էջմիածնից բաժանելու եւ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունից զրկելու ամեն մի փորձ՝ պարզապես հայությանն համար մահացու հարված է, ինչն էլ, միանշանակ, միայն հայոց ոխերիմ թշնամյաց չարակամ սրտի բաղձանքն է ու չարարար ձեռքի գործը:

Այո՛, գաղտնի չէ, որ ինչպես անցյալում, այսօր էլ կան Հայոց Եկեղեցու միասնության եւ հայ ժողովրդի միության թշնամիներ, որոնք բոլոր միջոցներով աշխատում են բաշրաչել հայոց հոգեւոր միությունը, համամիմվնվածությունը Մայր Եկեղեցու, Մայր Աթոռի եւ Մայր Հայրենիքի շուրջ:

Պատմությունը լավ հիշենք եւ պատմության դասերը լավ սերտենք, քանի որ այն կրկնվում է. Մեծ Եղեռնից հետո, 1916 թ., Օսմանյան կայսրությունը, որ մեծավ մասամբ իրականացրել էր իր տերությանն հայ հաստակեղեմի իսպառ բնաջնջելու ղմնդակ օրագիրը, դժոխայնի մի այլ որոշում է հղանում եւ արեւմտահայությունը բաժանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ու Ամենայն Հայոց Կաթողիկոսությունից՝ Թուրքիո հայոց համար պատրիարք-կաթողիկոս նշանակելով: Բաժանում, որով հայությանն այդ հատվածն անհաղորդ պիտի մնար Սուրբ Արմատի՝ Մայր Աթոռի կենսավիշիկ եւ այդպես պիտի բաշրաչվեր հայոց սուրբ միությունն ու մարեր հայ ոգին: Բայց, Աստված մեզ հետ է, ուրեմնն ով կարող է մեզ հակառակվել: Եվ ... փլուզվեց Օսմանյան կայսրությունը եւ հայ ժողովրդի ողջախոհ ու հավատավոր զավակները նոյնն ճվիրուսով ու նոյնն հավատարմությամբ շարունակեցին ապավինել Սուրբ Էջմիածնին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը տենչալ:

Երիցս փառք եւ գոհություն Բարձրյալ Տիրոջը, որ այս հավատավոր ժողովուրդը հոգեւոր սիրում է իր Մայր Եկեղեցուն եւ աստվածակառույց Սուրբ Էջմիածինը, ուստի եւ մեր թշնամիներին հիմնեալեմն չի հաջողվել հասնել իրենց չար նպատակին՝ բակել Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու միությունը: Հավատում ենք մեր համրուելի ժողովրդի իմաստությանն ու ապողոց ընազդին, եւ վստահ ենք, որ ինչպես անցյալում, այսօր նույնպես առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին տածած համայն հայ ժողովրդի ամենակարգ ու ամենաբարեպաշտ սիրով եւ Ամենայն Հայոց Հայրապետության հանդեպ համագգային անվերապահ հավատարմությամբ՝ կկորոտակվեն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու միասնությունը եւ մեր ազգի հոգեւոր միությունը վտանգող բոլոր չարաչար նար ծրագրերն ու ձեռնարկները:

«Աշխարհի վրայ ոչ մի հաամայնքոչ մի ընդհանրական գործ լոկ տեսությունների վրայ չի հիմնում, որպեսզի մարդիկ միատեղ ժողովուին, ազգ ընդհանրություն կազմեն, հարկաւոր է որ նորա երկար ժամանակ միասին ապրած լինին, նոյն կեանքով, նոյն սկզբունքներով, հարկաւոր է, որ նրա իրենց միութեան մի ներքին հոգեւոր կապ, մի արտաքին յայտարարագիր ունենան: Այն ընդհանուր կեանքը, որով ապրում է դարերէ վեր հայ ժողովուրդը զանազան աշխարհներում, զանազան պայմանների ներքոյ, ազգային Եկեղեցու անոանձնվայատուն կեանքն է. միայն նա Եկեղեցին կարող է այնպիսի ընդհանուր սկզբունքներ տալ, որոնցով պէտք է առաջնորդուի ամէն մի երկրի ինքնուսանաց հայ. միայն Եկեղեցին ունի այնպիսի արտաքին նշաններ եւ հոգեւոր կապեր, որ նոցա մի միութիւն կազմելը արտայայտում են եւ զգայտնիս: Եւ այդ բոլոր կապերի հանգոյցը Սուրբ Էջմիածինն է» (*Կարդա՛ պետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան*):

Տե՞ր իմ, «Աստուա՛ծ զօրութեանց, դա՛ռ, հայեաց յերկնից եւ տե՛ս, ա՛յց արա այգւոյս այսմիկ եւ դարմանե տա՛ սմա, զգո տգնեցեալ Աբրո» (Սաղմ. ՀԺ 15-16). ամեն:

Սամոիկ ՔԱՀՆՈՒՆԻ

ՈՎ ՀԱԿԱՌԱԿՎՈՒՄ Է ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ՝ ՀԱԿԱՌԱԿ Է ԱՍՏՈՒՆ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՊԵՏՐՈՍ Ա ԳԵՏԱԴԱՐՁ
(1019-1058)

Սկիզբը՝ էջ 3

Չնայած աղբյուրների լռությանը՝ այդ է հավաստում նրա հետագա գործունեությունը: Համոզվելով, որ ուժով անհնար է հաղթել երկրի ասկախության կողմնակից-ներին, նրանց միջոցով լուր է ուղարկվում Մոնոմախոս կայսերը, որ վերջինս Գագիկ Բ-ին Կոստանդնուպոլիս հրավիրի՝ բարեկամության առաջարկով, եւ այլեւս թույլ չտա, որ նա վերադառնա հայրենիք, մինչեւ որ նրան չգիջի Անին իր շրջակայքով: Բյուզանդական նենգ դիվանագիտությունն իսկապես գործի անցավ: Կայսեր անունից նամակ ուղարկվեց Գագիկ Բ-ին, որտեղ կայսրը երդվում էր խաչով ու Ավետարանով, որ նրան կվերադարձվի թագավորությունը, եւ նա կճանաչվի իր երկրի ու Անիի հավերժ տիրակալ:

Ի զարմանս բյուզանդացիների՝ թագավորը չկամեցավ ուղեւորվել Կոստանդնուպոլիս: Չնայած երիտասարդ տարիքին՝ նա բնագրով զգում էր որոգայթը, սակայն նրա շրջապատը, հանձին Վեստ Սարգսի եւ ուրիշների, հորդորում էր գնալ՝ ամեն կերպ ցույց տալով գնալու օգուտները եւ մասնավորապես Անին հանձնելու թագավորի կտակի լուծարման հնարավորությունը:

Վահրամ Պահլավունին, Գրիգոր Մագիստրոսը եւ շատ ուրիշներ, որոնք կյանքի մեծ կենսափորձ ունեին, փորձում էին թագավորին հետ պահել այդ ուղեւորությունից, սակայն մյուս թելը շարունակում էր ազգադավ գործունեությունը՝ խոստանալով հանուն նրա անգամ իրենց կյանքը գոհել: Ի վերջո, նրանք հաջողեցին: Նրանք կաթողիկոսի ներկայությամբ սաստիկ երդում տվեցին, եւ երիտասարդ թագավորը որոշեց ընդունել Մոնոմախոսի հրավերը: Այս խաբեության մեջ Վեստ Սարգսի, ինչպես նաեւ կաթողիկոսի դերակատարությունը որեւէ տարակույս առաջ չի բերում, սակայն չնայած Արիստակեսի կողմից այս անունևոների Գրիգոր Պահլավունու անվան ավելացմանը, դժվար է որոշակի ասել, թե ինչ դերակատարություն է ունեցել նա: Լռկ նշենք, որ Սամվել Անեցին գրում է, թե Պետրոս կաթողիկոսը, Վեստ Սարգիսը եւ Գրիգոր Բշենցին նենգեցին, այլ խոսքով՝ դավաճանեցին Գագիկ թագավորին, իսկ վերջինս փոխանակ քաղաքի բանալիները Վահրամ Պահլավունուն հանձնելու, տվեց կաթողիկոս Պետրոսին՝ երդում առնելով նրանից, Վեստ Սարգսից եւ մյուսներից: Գագիկ Բ-ն մեկնեց Կոստանդնուպոլիս 1044 թ. վերջերին, սակայն որոշակի ժամանակը հայտնի չէ:

Կոստանդնուպոլսում Գագիկ Բ-ն սկզբում արժանացավ արքայավայել ընդունելության, սակայն շուտով Մոնոմախոսը Սամոսայի բյուզանդական կառավարչի միջոցով լուր ստացավ Պետրոս կաթողիկոսից, թե իրեն եւ իր կողմնակիցներին ինչ կտան, եթե նա թագավորության բերդերն ու քաղաքները հանձնի նրան: Ազգադավ կաթողիկոսը շարունակում է հավատարիմ մնալ իրեն: Նա երրորդ անգամ վաճառում է հայրենի թագավորությունը՝ գործարքի մեջ մտնելով Մոնոմախոսի հետ: Այժմ կայսեր վերաբերմունքն արմատապես փոխվեց Գագիկ Բ-ի նկատմամբ: Մոռանալով իր երդումները եւ խոստումները՝ կայսրը փաստորեն ձերբակալեց հայոց թագավորին՝ պահանջելով Անին եւ խոստանալով նրան որպես փոխհատուցում հանձնել Մելիտինեի քաղաքն ու նրա շրջակա գավառները: Խոստանում էր այնտեղ Արծրունիների թագավորության օրինակով Բագրատունյաց թագավորություն ստեղծել, սակայն Գագիկ Բ-ն դա համարեց իր համար անպատվություն եւ հրաժարվեց կատարել կայսեր կամքը: Մոնոմախոսն իր հավակնությունները հիմնավորում էր Անիի կտակով, Հովհաննես-Սմբատի նամակով եւ միաժամանակ աշխատում էր կաթողիկոսին գանձեր եւ Վեստ Սարգսին իշխանություն խոստանալով՝ ձեռք ձգել Անիի բանալիները: Իսկ երբ, ի վերջո, Անիի բանալիները հայտնվեցին կայսեր ձեռքում, նա կրկին սկսեց հարմոզել Գագիկ Բ-ին՝ հրաժարվել Անիից՝ մեջտեղ բերելով կտակը եւ որպես փաստ նրան ցույց տալով Անիի բանալիները: Չնայած Գագիկ Բ-ն կրկին հայտարարեց, որ ինքը հայոց թագավորն է եւ Անին չի տալիս, եւ Քրիստոսը կդատի միայն իրեն եւ իրեն դավաճանողներին, նրան պարզապես կալանքի տակ առան եւ 30-օրյա բանտարկությունից հետո համոզվելով, որ այսպես կոչված յուրայինները նրան դավաճանել են եւ նի որությունն էլ անելանելի է, ակամա ստիպված եղավ գիջել: Սակայն կայսրը նրան Մելիտինեն անգամ չտվեց եւ առաջարկեց ամուսնանալ Սեբաստիայի՝ վախճանված Դավիթ թագավորի այրու հետ եւ ստանալ նրա բաժինը, որը Դավիթը ստացել էր Նիկեփորոս Ծովիզին սպանելու համար: Ըստ որում, եթե Դավիթը ստացել էր Կեսարիան, Ծամնդավը եւ Խավարտանեքը, ապա նրան տրվում էն միայն **Կալունպաղատը** եւ **Պիղոն**, որոնց որոշակի տեղը հայտնի չէ: Այս ամենը տեղի ունեցավ 1044-ի վերջերին:

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր



ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

Մատթեոսի Ավետարանի մեկնությունից

Սկիզբը՝ թիվ 22

Իսկ ինչո՞ւ ոչնչից հաց չստեղծեց: Որպեսզի փակի [հերձվածողների]՝ Մարկիոնի եւ մաքիքեականների բերանները, որոնք նրան Աբրահիմ չեն ճանաչում, որպեսզի ինց գործերով սովորեցնի, որ բոլոր երեւացող բաներն Իր ստեղծածն են՝ Իր գործերը, եւ որպեսզի ապացուցի, որ Ինքն է, որ ածեցում է պտուղները, [Ինքն է], որ ի սկզբանե ասաց. «Թող երկիրը բույս, եւ ջրերը կենդանությանն շունչ ունեցող զեռուններ արտադրեն»: Իսկ այս հրաշքը փոքր չէ, բան այն: Քանզի բեռ երկիրը ոչնչից է արարված, սակայն բույսերը՝ հողից, եւ զեռունները ջրից են առաջացվել: Իսկ հինգ ճկնակից բազում հացեր եւ երկու ձկից՝ բազում ձկներ ածեցնելը պակաս կարեւոր չէ, բան այն, որ հողից բույս, իսկ ջրից զեռուններ հաճելը: Այդ ցույց տվեց, որ Հիսուս իշխանություն ունի հողի եւ ծովի վրա: Մինչ այդ Նա հրաշքներ էր գործում միայն հիվանդների վրա, իսկ այժմ բոլորի համար է բարիք գործում, որպեսզի ժողովուրդը չմնա սոսկ դիտորդ այն բանի, ինչ կատարվում է ուրիշների հետ, որպեսզի ինքը նույնպես բարիքներ վայելի: Եվ ինչը, որ անապատում հրեաներին հրաշք էր թվում (նրանք ասում էին. «Մի՞թե կարող է հաց տալ կամ սեղան պատրաստել այս անապատում» [Սաղմ. 127, 20]), այդ նույնը Տերը գործով է ցույց տալիս: Դրա համար նրանց անապատ է տանում, որպեսզի հրաշքը որեւէ կասկածի չենթարկվի, եւ ոչ ոք չմտածի, թե իրենց կերակրելու համար այդ ամենը բերվել է մոտիկ բնակավայրից: Այդ պատճառով էլ ավետարանիչը ոչ միայն տեղը, այլ նաեւ ժամն է նշում: Այստեղից մեկ այլ բան էլ ենք սովորում. այն, որ աշակերտները ժուժկալ էին եւ այնքա՜ն քիչ էին մտահոգվում, թե ինչ պիտի ուտեն, այնքան քիչ էին հոգ տանում մարմնավորի մասին. միայն հոգեւորի մասին էին հոգում: Նրանք տասներկու հոգի էին եւ իրենց հետ ունեին ընդամենը հինգ ճկնակ եւ երկու ձուկ: Եվ այդ քիչ հացն էլ չպահեցին, այլ էլ տվեցին, հենց որ իրենցից խնդրեցին: Այստեղից մենք պետք է սովորենք, որ թեեւ քիչ բան ունենք, այն էլ պարտավոր ենք տալու կարիքի մեջ գտնվողին:

Երբ նրանց հրամայեց բերել հինգ ճկնակները, ճկնք չասացին. «Հապա մե՞նք ինչ պիտի ուտենք, ինչո՞վ պիտի հագեցնենք մեր քաղցը», այլ ամենիջապես լսեցին: Այս ասվածից բացի, իմ կարծիքով, Քրիստոս կրկին հաց չի արարում, որպեսզի աշակերտներին դեպի հավատ բերի. քանզի նրանք դեռեւս տկար էին: Այդ պատճառով էլ երկինքը նայեց: Մեկ անգամ չէ, որ նրանք հրաշքներ էին տեսել, սակայն այդպիսի հրաշք դեռ չէին տեսել: Այսպիսով, վերցրեց, կտրեց եւ բաշխեց աշակերտների միջոցով՝ դրանով պատվելով նրանց: Իմիջիայլոց, Նա այդ արեց ոչ այնքան նրանց պատվելու, որքան այդ բանի համար, որպեսզի երբ հրաշքը կատարվեր, նրանք անհավատության մեջ չմնացին եւ չմոռանային կատարվածը, որի մասին իրենց իսկ ձեռքերը կվկայեին: Այդ նպատակով էլ բույլ տվեց, որ աշակերտները գան եւ խնդրեն Իրեն, նրանց միջոցով տվեց հացը՝ կամենալով, որ յուրաքանչյուրը հրաշքը ընկալի սեփական մտքով ու փորձով: Այդ պատճառով էլ աշակերտներից վերցրեց հացը, որպեսզի շատ լինեն վկաներն այն բանի, ինչ պիտի տեղի ունենար, եւ որպեսզի նրանք հիշեին հրաշքը: Եվ երբ այդ ամենից հետո նրանք մոռացան այն, ապա ի՞նչ կլիներ, եթե այդպես չարվեր:

Տերը հրամայեց նստել խոտի վրա՝ դրանով ժողովրդին կենցաղի պարզությունն ուսուցանելով. կամենալով ոչ միայն նրանց մարմինը սնել, այլ նաեւ կրթել նրանց հոգին:

Եվ այսպես, Տերն ընտրեց այդպիսի տեղ, չտվեց ավելին, այլ միայն հաց եւ ձուկ, բոլորի առջեւ դրեց նույն ուտելիքը եւ ոչ թե մեկի առջեւ մի, մեկ ուրիշի առջեւ այլ բան, որպեսզի դրանով ուսուցանի խոնարհություն, ժուժկալություն, սեր, որպեսզի մենք էլ ամեն բան ընդհանուր համարենք, եւ բոլորս իրար նման լինենք: «Կտրեց եւ նկնակները աշակերտներին տվեց, իսկ աշակերտները՝ ժողովրդին»: Կտրեց եւ տվեց հինգ նկնակ, եւ այդ նկնակները աշակերտների ձեռքերի մեջ շատացան: Սակայն հրաշքը դրանով չավարտվեց: Տերն ավելացրեց ոչ թե նկնակները, այլ դրանց կտորտանքները, որպեսզի ցույց տա, որ դրանք ճիշտ այն նկնակների կտորներն են, եւ որպեսզի նրանք, ովքեր ներկա չէին հրաշքի կատարման ժամանակ, կարողանային իմանալ, որ այդ եղել է: Դրա համար էլ Քրիստոս թույլ տվեց, որ ժողովուրդը քաղց զգա, որպեսզի ոչ ոք հրաշքը իբրեւ երազ չընդունի: Եվ տասներկու սակառ ավելացրեց, որպեսզի Հուդան նույնպես այն կրի: Տերը կարող էր նաեւ առանց հացի հագեցնել նրանց քաղցը, բայց այդ ժամանակ աշակերտները չէին իմանա Նրա զորությունը, քանզի Եղիայի ժամանակ նույնպես այդպիսի բան եղավ: Եվ այստեղ հրեաներն այնպես զարմացան, որ կամեցան էին իրենց թագավոր դարձնել Նրան, մինչդեռ մյուս հրաշքների ժամանակ երբեք այդպիսի բան չմտածեցին:

Եվ արդ, ի՞նչ խոսքով է արտահայտվում այն, թե հացերն ինչպես էին բազմանում, ինչպես էին տարածվում անապատում եւ ինչպես էին բավականացնում այդքան մեծ բազմության, որ հինգ հազար հոգի էր՝ չհաշված կանանց ու երեխաներին: Եվ գովելիս այն է, որ ոչ միայն տղամարդիկ, այլ նաեւ կանայք էին հետեւում Հիսուսին: Առաջինից պակաս կարեւոր չէ այն, թե որքան ավելացան հացի կտորտանքները: Ի դեպ, կտորտանքներն ավելացան այնքան, որ սակառների թիվը հավասարվեց աշակերտների թվին՝ ոչ ավելի, ոչ պակաս: Տերը դրանք չտվեց ժողովրդին, այլ աշակերտներին, բանի որ ժողովուրդ այնքան կատարյալ չէր, որքան աշակերտները:

Շարունակությունը՝ էջ 7



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ

Սկիզբը՝ էջ 4

Մահվան առջեւ բոլորը պատասխան պիտի տան. փրկությունը հոգու մաքրությունն է, պատգամում է բանաստեղծը:

Համանման մի տաղ է «Յովհաննու վարդապետի Եզընկացոյ, մականուն Պլուզ կոչեցեալ, ասացեալ բան շահավէտ եւ ուգտակար» վերնագրվածը: Բանաստեղծը հոգեմիջնորդի դեր է ստանձնում՝ ասելով. «Գիտեմ, որ ամէն մարդ չկարէ ուսնիլ ի գրէն, Վասն այնորո զայս գրեցի, որ լսէք յիւնէն»: Վերստին ամեն ինչ սկսում է Աղամից ու Եվայից եւ հասնում Քրիստոսի զորությանը: Այս տաղը Երզնկացին գրել է պատվերով, ինչի մասին ասում է.

Այս եղբայրս, որ զայս ուզեց, ու ես գրեցի,
Ի վերայ ճամփու էր նա, ու ես շտապով ի,
Բայց զայս որ գրեցի բանիկ մի բանի,
Այս լինէն ձեզ յիշելիք ու սերմն բարի:

Աղամի եւ Եվայի առասպելին Երզնկացին անդրադարձել է նաեւ «Տաղ Աղամայ, Պլուզ վարդապետի ասացեալ է» գործում: Աղամն Աստծու անեծքն է խնդրում Եվայի եւ օձի համար, որոնք խաբեցին իրեն: Աստծու առջեւ իր անմեղությունն է նա խոստովանում՝ որպես կրկնեց անընդհեց այս ասելով. «Ողորմա՛ծ, ողորմա՛ծ ես, մարդաւէր, Մի՛ անտես առներ դու մեզ, տե՛ր»:

Այս նյութը Երզնկացուն շատ է հետաքրքրել, քանզի դրան անդրադառնում է նաեւ «Տաղ Աղամայ, ասացեալ ի Պլուզ վարդապետէ», «Տաղ Յովհաննէս Պլուզ վարդապետի ասացեալ» գործերում: Աղամը նստել որախտի դռանը լաց է լինում, բայց այլեւս վերադարձի հնար չկա: Ա-

Պլուզ վարդապետի ասացեալ ողբ աստուածածնին» տաղը, որը տիրամոր ողբն է խաչված Հիսուսի առջեւ: Դարձյալ տիրամորն է նվիրված «Տաղ ի Յոհաննէս Պլուզ վարդապետէ» ներբողը, որի տեղի առաջին տաղերի ծայրակապը հոդում է հայոց այբուբենը Այբից Քե: Քրիստոսի ծննդյանն է նվիրված «Յովհաննու վարդապետի ասացեալ ոտանաւոր չափով, մականուն Պլուզ» տաղը, որ ներկայացնում է սուրբ կույսի հղիանալը, Քրիստոսի ծնունդը, մկրտությունը, խաչելությունն ու հարությունը:

Հայոց եկեղեցուն, հայոց եկեղեցու սուրբերին են նվիրված «Շարական եաւթն խոտաճարակացն», «Տաղ սրբոյ Գրիգորի Լուսաւորչին Հայոց, Յոհաննէս Պլուզ վարդապետի ասացեալ», «Վարդապետաց է բանս», «Ի սուրբ կոյսն Հռիփսիմէ» երկերը: Վերջին երկուսն ունեն ծայրակապ: Առաջինը՝ «Գրիգորիոս Լուսաւորիչ հայոց», երկրորդը՝ «Յոհաննէս» եւ «Հռիփսիմէ»: Առաջինը՝ տողերի անմիջական հաջորդականությամբ է: Երկրորդում՝ «Հռիփսիմէ» կարդացվում է տների առաջին տողերը, «Յոհաննէս» երկրորդի տողերով:

Սրանք բնույթով փառաբանական ներբողներ են: Գրիգոր Լուսավորիչին է նվիրված նաեւ «Վարդապետաց է բանս» տաղը, որի մեջ սուրբը փառաբանվում է այսպիսի պատկերներով. «Դու ամպ լըցեալ ցաւոց ցաւոգաթիւ, Յաւելեալ ի մեզ զցաւոց երկնային»: Իսկ Հռիփսիմէին ձոնված ներբողը առատ է հնչյունական ներդաշնակությամբ. «Սիրասնունդ սիրամայր սըխրաթ, <...> Մըտաւոր մարտիրոս մրգական <...> Հրեշտակ հրաշագեղ Հռիփսեմէ»: Վերջին տողը նաեւ կրկներգ է: Այս հարցում երգվածքային ակնհայտորեն հետեւել է Գրիգոր Նարեկացու օրինակին, որի անունը թեեւ չի տալիս, բայց որի հայտնի բաղաձայնությունը քիչ վերափոխված առկա է նաեւ նրա «Տաղ վարդավառին ազնիւ եւ անուշ ասելոյ» գործում. «Այսաւէր շողէր շուշան հովտին եւ շողշողոցեր դէմ արեւին»: Այստեղ կիրառել է նաեւ կրկներգի հնարը՝ յուրաքանչյուր տան նախավերջին տողում ասելով՝ «...ցընծա՛յ, ցընծա՛յ, ցընծա՛յ...», իսկ վերջին տողն ավարտվելով «...գուարճանա» բառով: Ավելացնենք նաեւ, որ յուրաքանչյուր տուն սկսվում է «Այսաւէր» բառով: Ընդհանրապես կրկներգի շեշտող, ներգործող նշանակությանը Երզնկացին լուրջ կարեւորություն է տալիս:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԻՈՌԱՆ ԱՐՔ. ՍԱՆ-ՖՐԱՆՖԻՍԿԻ (ՇԱԽՈՎԱԿՈՅ)

ԱԵՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎԱՐՔ

Սկիզբը՝ թիվ 16-18

Աստծո երկյուղի զորությունը մարդու հոգում ծնում է չարի մերժում եւ ձգտում դեպի ճշմարտություն: Աստծո երկյուղի լույսի մեջ ապրող մարդը տեսնում է իր սրտի բոլոր ստվերները: Եվ որքան շատ է նա իր մեջ ներառում Քրիստոսի լույսը, այնքան ավելի պարզորոշ է տեսնում իր ամենաչնչին անհավատարմությունն իսկ Աստծու եւ առավել բուռն ատում իր սրտին՝ ցանկացած մեղքի մերձենցում. նույնիսկ անենչ թվացող մեղքը արդարացիորեն դիտելով որպես անջրպետ Աստծո եւ իր միջեւ:

Սա մշտական ուշադրություն է իր հանդեպ. սեփական կամքի շարժումների ճանաչումից ծնված լուսավոր ատելությունը սեփական անձի հանդեպ ամենեւին նման չէ այն ատելությանը, որ տածում է իր հանդեպ լոկ ինքն իրեն սիրելու ընդունակ մարդը: Կա մարդու՝ իր հանդեպ տածվող եւ ավետարանական, եւ դիվային ատելություն: Չարի մեջ ապրող մարդը եւս ընդունակ է երբեմն անկեղծորեն ատելու, արհամարհելու իրեն, զզուշանալու ինքն իրենից՝ չարի մեջ ունեցած իր ոչ բավականաչափ կատարյալ լինելու պատճառով: Մարդասպանը, որ խղճից վախենալով չի սպանում իր հանցագործության վկաներին, նույնպես ընդունակ է արհամարհելու իրեն նման «փորրոգության» համար եւ նույնիսկ «զղջալու»: Հանցագործության հետերը բաբցնել չկարողացող հանցագործը կարող է ատել իրեն նման վրիպումի համար: Բարոյապես շուռեկած՝ բարոյապես «գլխիվայր» թալող այս մարդկանց չարի օձը ոչ թե գաղշապարե է խայթում, այլ հենց գլուխը: Աշխարհում տեսնում ենք մարդկանց, ովքեր գիտակցաբար սովորեցնում, նույնիսկ՝ պարտադրում են իրենց լիովին անբարոյացված, կոպիտ ու թարսիրտ ուրիշների (հաճախ նույնիսկ իրենց ընտանիքի անդամների) հանդեպ. այդ ժամանակ մարդը վախենում է ունենալ, անգամ նույնիսկ ցույց տալ, որեւէ առնչություն մեկ ուրիշի հետ: Այդ զգացմունքի զարգացումն ու դրա տեխնիկական կազմավորումը ժամանակակից համակենտրոնացման ճամբար է:

Մարդու բարոյական վիճակը դժվարին է դառնում մանավանդ այն ճամանակ, երբ նրա հոգին, ասես վարակված հայտնության «մարակով», մասանկից է աշխարհի որեւէ հավաքական չարի: Այդ ժամ մարդիկ սկսում են ատել եւ ոչնչացնել միմյանց՝ ելնելով արտաքին՝ արյան, ռասայի, դասակարգի, ծագման կամ էլ աշխարհում փոփոխվող գաղափարական տարբերություններից: Հավաքական չարի մեջ բարոյական այլասերումն հիրաեւարդարացման ավելի շատ առիթներ է ունենում, թեեւ հիրաեարդարացումը հոգեբանորեն, սովորաբար ոչ մի առիթ էլ չի պահանջում:

Հ ավիտենական արժեքների եւ հոգեւոր իրականությունների չհավատացող մարդը վախենում է լինել ազնիվ («վկաղբատանաա»), անկեղծ («կնծիծանեն»), արդար («կխարեն»), բարի («կշահագործեն») եւ այլն: Կյանքը բաբնված է երեսպաշտության, պայմանականության կեղեւի տակ: Ամեն ինչ դառնում է երկակի ու կիսաճշմարիտ: Հոգիների վրա ոժտխային լույս է սփռվում՝ ոչ թե Արեգակի՝ Քրիստոսից, այլ մարդկային ուղեղի եւ ոսկորների ֆոսֆորից:

Սա հիշեցնում է քաղաքների օդային խոշոր ռմբակոծությունները գիշերում: Սեռած լույսի ոժտխային ձայների, ոչ մարդկային կրակների եւ միաժամանակ ինչ-որ լռություն, լուսնային ամայության, ֆոսֆորային ահեղի անապատ... Ով թեկուզ մի անգամ տեսել է նման բան, ապա երբեք չի մոռանա հողագնդի դատապարտված այդ վայրի վրա սփռված «մահվան եղեւնիների» անկենդան լույսը եւ զենքերի կայծակնափայլը պայթյունների ու հրդեհների հրացոլքում: Այդպիսին է աշխարհի լույսը՝ հակադիր Քրիստոսի լույսի. սա միաժամանակ նաեւ դատաստան է աշխարհի հանդեպ, նրա ոչ ճիշտ մտքերի, ցանկությունների, նրա կյանքի բոլոր կիսաճշմարտությունների արտաքին դրսեւորումը:

Աշխարհում շատ հոգիներից երկինք են բարձրանում կրքերի՝ հպարտության, ագահության, չարության, նախանձի, տարփածքի մրե սեւ քուլաները: Այդ ամենօրյա կեցությամբ մուրը, որպես մի հսկայական սեւ ամպ, մեկտեղվում է երկրի վրա եւ ամբողջովին սփռված է մարդկային կյանքի ու պատմության վրա: Դրանից էլ երկրի վրա շրջում է վախի ստվերը: Այդ ստվերը չնն տեսնում միայն իրենցով արբած, անտարբեր, անգգա մարդիկ եւ մեկ էլ նրանք, ովքեր հանկված են ատվածայնի սիրով:

Մաս Գ

Աստծուց հեռացած մարդու գլխավոր տառապանքը ինքնասիրությունն է: Շնորհազուրկ այս տառապանքը ծնվում է Աստծով չլուսավորված սիրո՝ նեռա-սիրո (**প্রেলুব্বা**) շրջանում:

1) Սեր իր կեղծ ու ողորմելի փաքի հանդեպ այս աշխարհում, 2) սեր կեղծ ու վաղանցիկ արժեքների հանդեպ, 3) սեր մարմնական հաճույքների ու արտաքին հանգստության հանդեպ - ահա մարդկային այս երբեք եեթա-սերերն են, որ, միավորվելով մեկ շրջանում, աշխարհ են նետում վախի սատանայական ստվերը:

«Ամբարտավան հոգին ստրուկն է վախի՝ լինելով ինքնավստահ՝ նա վախենում է ամենամի շրշյունից, նույնիսկ՝ ստվերներից» (Կոնամարոս, Մանդուրը, բն. 21, գլ. 4): «Վախնելը հավատից շեղվելն է՝ անսպասելիությունների սպասման մեջ» (նույն տեղում գլ. 2): «Թեեւ բոլոր վախկոտներն էլ սնամոլեն, հարամ է Հովհաննես Սանդուխը (Կոնամարոս),- սակայն ոչ բոլոր անհրկնտները են խոնարհամիտ», «ոչ ավազակները, ոչ էլ գիշերազնամիրները չեն վեխենում» (գլ. 6):

Առաջին ենթասերը շրջապատված է սեփական ուսության, անպատվության կամ մարդկանցից ցանկալի հարգանքը չտանալու վախով: Դա վախ է անուշադրության, տեսնելու իր անձի, ընդունակությունների, տաղանդների, կատարելությունների հանդեպ: Այդ վիճակում, ինչպես հարցեցողն է գիտի փնտրում, այնպես էլ մարդիկ փնտրում են ուրիշներից իրենց խրախուսում եւ ճանաչում, նույնիսկ այն մարդկանցից, որոնց հանդեպ իրենք միանգամայն անտարբեր են: Արվեստագետը կամ քաղաքական գործիչը, ով վերեւից է նայում «ամբոխին» (իրեն դրանից զատելով), միաժամանակ խիստ տենչում է որ այդ ամբոխն ընդունի եւ երկրպագի իրեն: Վախենալով սա չգտնել: Մարդը հաճախ իր կյանքը դնում է ուրիշների կարծիքից կախվածան մեջ: Սա ընդհանուր ստրկության ծանր շղթաներից մեկն է:

Շարունակությունը՝ էջ 2



ՄԱՐԿՈՍ ԽՔԵԼՈՒՐ

(Ե դպր)

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՖՎԵՑ ԽՈՍՔ ՆՐՎՈՅ ՀԱՄԱՐ, ՈՎՔԵՐ ԿԱՐԾՈՒՄ ԵՆ, ԹԵ ԳԱՐԾԵՐՈՎ ԵՆ ԱՐԴԱՐԵՈՒՄ

36. Ինչ որ անում ենք առանց կարդալ եւ մեր հույսն Աստծո վրա դնելու՝ հետո դառնում է վնասակար եւ արատավոր:

37. Քրիստոսի խոսքը, թե «աղքատները վերջին կլինեն, եւ վերջինները՝ առաջին» (Մատթ. ԺԹ 30), վերաբերում է նրանց, ովքեր առաքինություններ են գործում, եւ դրանց, ովքեր սեր են ցուցաբերում. որովհետեւ սերը սրտում ծնող առաքինությունների վերջինն է, սակայն արժեքով՝ առաջին. եւ արդյունքում ստացվում է, որ նրանից առաջ ծնվածները դառնում են վերջին:

38. Եթե ադոթելիս անհանիստ ես կամ նեղվում ես չարի գայթակղազան փորձություններից, մտածիր քո մահվան եւ դժոխքի տանջանքների մասին: Սակայն պետի լավ է հույսով եւ ադոթքով դառնալ Աստծուց, քան արտաքին խաների մասին մտածել, նույնիսկ եթե այդպիսի խորհուրդներն օգտակար լինեն:

39. Ոչ մի առաքինություն միայնակ չի կարող բանալ մեր հոգեւոր դուռը, այլ բոլո՛ր առաքինությունները պետք է միմյանց հետ կանչեն ճիշտ հաջորդականությամբ:

40. Նա, ում մտքում խորհուրդները վիտտում են, զուրկ է ինքնաբառավարումից, եւ նույնիսկ եթե դրանք օգտակար են, հույսն առաջինը օգտակար է:

41. Կա մեղք, որը միշտ մահաբեր է (Ա Հովհ. Ե 16). դա այն մեղքն է, որի համար չենք զղջում: Այս մեղքի պատճառով նույնիսկ սրբի աղոթքները չեն լսվի:

42. Ով ճշմարտապես է զղջում, չի մտածում, թե իր սեփական ջանքն է, որ ջնջում է իր մեղքերը: Սակայն այս ջանքի միջոցով նա խաղաղություն է հաստատում Աստծո հետ:

43. Եթե մենք պարտավոր ենք ամեն օր կատարել այն բոլոր բարի գործերը, որոնք հնարավոր են մեր բնությանը, ապա ի՞նչ ենք թողնում, որ մատուցենք Աստծուն իբրեւ մեր անցյալ մեղքերի փոխհատուցում:

44. Որքան էլ մեր այսօրվա առաքինի գործերը մեծ լինեն, նրանք չեն ծածկի, այլ կդատապարտեն մեր անցյալի անփութությունը:

45. Ով մտքով տանջվում է, իսկ մարմնով հանգստանում, նման է նրան, ով մարմնով տանջվում է եւ միաժամանակ թույլ տալիս, որ իր միտքը ցրվի:

46. Կամավոր տանջանքը մեր բնության հետեւյալ մասերից մեկում օգուտ է բերում մյուսին. մտքով տանջվելը օգուտ է մարմնին, իսկ մարմնով տանջվելը՝ մտքին: Երբ մեր միտքն ու մարմինը միաբան չեն լինում, մեր վիճակը վատթարանում է:

47. Մեծ առաքինություն է պատահող ամեն ինչ համբերությամբ ընդունելն ու ըստ Տիրոջ հրամանի՝ մեզ ատող ընկերոջը սիրելը:

48. Անկեղծ սիրո Նշանը մեր հանդեպ գործված մեղքերը ներելն է: Այսպիսի սիրով էր, որ Տերը սիրեց աշխարհը:

49. Մենք չենք կարող ամբողջ սրտով նեղել մեզ վատություն անողին, եթե չունենք իրական գիտությունը. որովհետեւ այս գիտությունը ցույց է տալիս մեզ, որ մենք արժանի ենք այն ամենին, որ կրում ենք:

50. Դու ոչինչ չես կորցնի նրանից, ինչից հանուն Տիրոջ հրաժարվել ես. իր ժամանակին այն բազմապատկված կվերադառնա քեզ:

51. Երբ միտքը մոռանում է մեր ճշմարիտ ովքիրավ նպատակը, առաքինության արտաքին գործերը ոչ մի օգուտ չեն բերում:

52. Եթե թույլ ուտողությունը վնասակար է ամենքին, ապա սա մասնավորապես այսպես է նաեւ նրանց համար, ովքեր ապրում են մեծ խստությամբ:

53. Մարդու կամքի եւ Աստծո հատուցման մասին իմաստասիրիր քո գործերի միջոցով, որովհետեւ խոսքերդ միայն այնքան իմաստուն ու օգտակար կարող են լինել, որքան գործերդ:

54. Հանուն ճշմարիտ սվիրման չարչարվողներն օգնություն են ստանում: Սա պետք է սովորել Աստծո օրենքին եւ մեր սեփական խղճին հնազանդվելու միջոցով:

55. Մեկին մի խորհուրդ այցեելեց, եւ նա ընդունեց այն առանց քննության: Մի ուրիշին խորհուրդ այցելեց, եւ նա որա ճշմարիտ լինելը ստուգեց: Որանցից ո՞վ ավելի ճիշտ վարվեց:

56. Իրական գիտությունը վիշտը համբերությամբ տանելն է եւ մեր դժբախտությունների համար ուրիշներին չմեղադրելը:

57. Ով մի բարի գործ է կատարում եւ վարձատրություն ակնկալում, ոչ թե Աստծուն է ծառայում, այլ սեփական կամքին:

58. Մեղավորը պատժից չի կարող խուսափել առանց իր մեղքին համապատասխան ապաշխարության:

59. Ոմանք պնդում են, թե մենք չենք կարող բարիք գործել, եթե չստանանք Հոգու շնորհը:

60. Ովքեր միշտ իրենց ընտրությամբ հակվում են դեպի զգայական հաճույքները, հրաժարվում են անել այն, ինչ իրենց ուժերի սահմաններում է, այն պատճառաբանությամբ, թե օգնություն չեն ստանում:

61. Խորհրդականորեն (միստիկորեն) շնորհ է տրվել նրանց, ովքեր մկրտվել են ի Քրիստու, եւ այն նրանց մեջ գործում է դառնում այնքանով, որքանով պահվում են պատվիրանները: Շնորհը երբեք չի դադարում մեզ գաղտնի օգնելուց, սակայն բարին գործելը՝ մեր հնարավորությունների սահմաններում, կախված է մեզանից:

62. Առաջին հերթին շնորհն աստվածայնորեն արթնացնում է խիղճը: Ահա թե ինչպես են մեղավորները ապաշխարության գալիս՝ այսպիսով ենթարկվելով Աստծո կամքին:

63. Դարձյալ՝ շնորհը կարող է թաքնված լինել ընկերոջ տված խորհրդի մեջ: Երբեմն այն նաեւ ուղեկցում է մեր հասկացողությանը ընթերցանության ժամանակ եւ իրերեւ բնական հետեւանք՝ մեր բանականությանը սովորեցնում իր մասին ճշմարտությունը: Եթե, ուրեմն, մեզ այս կերպ տրված տաղանդը չթաքցնենք, կմտնենք Տիրոջ ուրախության մեջ:

64. Ով փնտրում է Հոգու զորությունները, երբ դեռեւս գործնականորեն չի պահել պատվիրանները, նման է նրան, ով ինքն իրեն ստրկության է վաճառում եւ հենց գնվում է, իր վաճառքի գումարն իր մոտ պահելով՝ խնդրում է, որ ի՛րեն ազատություն շնորհեն:

65. Եթե հասկացել ես, որ արտաքին բաները քեզ պատահում են Աստծո արդարությամբ, ապա Տիրոջը փնտրելիս գտել ես հոգեւոր գիտություն եւ արդարություն (տ. Առակ. ԺԶ 6):

66. Հենց հասկանաս, որ Տիրոջ դատաստանները «բովանդակ երկրում են» (Ա Մն. ԺԶ 14), այնուհետեւ քեզ պատահող ամեն ինչ կսովորեցնի քեզ Աստծո գիտությունը:

67. Յուրաքանչյուրը ստանում է այն, ինչին արժանի է ըստ իր ներքին վիճակի: Սակայն միայն Աստված է հասկանում այն բազմաթիվ տարբեր ճանապարհները, որոնցով դա պատահում է:

68. Երբ դու մարդկանցից որեւէ անպատվություն ես կրում, անմիջապես ճանաչիր այն փառքը, որ քեզ պիտի տրվի Աստծուց, եւ չես վշտանա կամ տխրի անպատվությունից: Եվ երբ փառքն ընդունես, հաստատուն կմնաս եւ չես մեղանչի:

69. Երբ Աստված թույլ է տալիս, որ գովեստներ ընդունես, մի՛ պարծեցիր այս աստվածային նախախնամության պատճառով, որպեսզի չլինի թե այնուհետեւ անպատվություն կրես:

70. Սերմը չի աճում առանց հողի եւ ջրի, եւ մարդը չի զարգանում առանց կամվոր վշտակրության եւ աստվածային օգնության:

Շարունակելի

Անգլերենից թարգմանեց
Ս. ՍԱՍՍԵՐԼՅԱՆԸ



ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

Մատթեոսի Ավետարանի մեկնությունից

Սկիզբը՝ էջ 5

Եվ երբ հրաշքը կատարվեց, Նա իսկույն ստիպեց Իր աշակերտներին նավակ մտնել եւ առաջանալ դեպի մյուս կողմը, մինչեւ որ ինքը ժողովրդի բազմությանն արձակի» [22]: Եթե Նրա ներկայությամբ կարող էին մտածել, թե տեղի ունեցածն «հրաշք» է եղել, այլ ոչ թե իրականում, ապա Նրա բացակայությամբ այդպես հասկանալ է եղել, այլ ոչ թե իրականում, ապա Նրա բացակայությամբ այդպես հասկանալ չէին կարող: Ուստիեւ աշակերտներին հնարավորություն տալով խստանալ՝ «Ինքն ինքնին ասաց. Ինչ հրամայեց իրենց հետ վերցնել կատարված հրաշքի հիշատակներն ու ապացույցները եւ հեռանալ Իրենից: Դրանք դեպքերում, ինչպիսի մեծ գործ կատարելով, Քրիստոս Ինքն էր հեռանում ժողովրդից ու աշակերտներից, որպեսզի մեզ ուսուցանի փառք չփնտրել եւ դեպի մեզ չգրավել ժողովրդին: Իսկ ասելով՝ «ստիպեց Իր աշակերտներին»՝ ավետարանիչը ցույց է տալիս, որ աշակերտները չէին կամենում բաժանվել Նրանից: Քրիստոս նրանց ստիպեց ժողովրդին արձակելու պատրվակով, բայց իրականում կամենում էր լեռնարարկեց մեզ էլ դեպի ուսուցանելու համար, որպեսզի մենք էլ ոչ թե ինչ-որ բան ասենք, ինչ-որ բան գրենք, ինչ-որ բան գրենք եւ մեզ ինչ-որ բան աս

ԼՈՒՐԵՐ Հայկաքաղից

Հոգեհանգիստ Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանում

Դեկտեմբերի 7-ին, Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի հանդիսությունների սրահում, ուղիղ ժամը 11. 41-ին, ողջ պաշտոնեության և սաների ներկայությամբ մեկ րոպե լռությունից հետո կատարվեց 1988թ. ահավոր երկրաշարժի անմեղ զոհերի համար հոգեհանգիստյան արարողություն:

Մարդասիրական ճեմարանի կառավարիչ և հնդկահայոց հոգևոր հովիվ Տ. Օշական վրդ. Գյուլգությանը՝ դիմելով պաշտոնեությանը և սաներին, անոթաղարձով ոչ միայն 1988թ. Հայաստան աշխարհին պատահած արհավիրքին, այլ նաև այն բոլոր բնական աղետներին, որոնք տեղի ունեցան վերջին շրջանում ողջ աշխարհում: Հայր Սուրբը ներկաներին հորդորեց միշտ հիշել և աղոթել բնական աղետներից զոհվածների հոգիների համար և կարելիքն ու օգնության ձեռք մեկնել բոլոր կարիքավորներին:

«Վերջին շրջանում բազմաթիվ են բնական աղետները մեր մոլորակում, որոնց պատճառով բազմաթիվ մարդիկ զոհվեցին, շատեր կորցրեցին իրենց հարազատներին ու մտերիմներին, շատեր էլ հայտնվեցին բաց երկինքի ներքո: Ոնսի այսօր անենքիս ներկայական պարտքն է ոչ միայն աղոթելու զոհվածների համար, այլ նաև սփոփելու, մխիթարելու այն բոլոր մարդկանց, ովքեր տառապում են այս աշխարհում զանազան բնական աղետների պատճառով՝ միշտ մտաբերելով, որ ամենքս Աստծո արարչագործության արդյունքն ենք, եւ աստվածային պատվիրանների համաձայն՝ պարտավոր ենք միշտ նեցուկ լինելու կարիքավորներին»,- ճշեց Հայր Սուրբն իր խոսքում:

«Ազդարար» ամսագրի խմբագիր Տ. Հարությունյան ավ. քհն. Շմավոնյանի կիսանցրու պաշտոնական բացման արարողությանը մասնակցելու համար Կալկաթա էին ժամանել Հնդկաստանի Հանրապետությունում պաշտոնական այցով գտնվող ՀՀ ԿԳ նախարար Սերգո Երիցյանը և նրան ուղեկցող պատվիրակության անդամները, ինչպես նաև Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Քոչարյանը:

Ս. Պատարագից հետո, եկեղեցու բակում տեղադրված Տ. Հարությունյան ավ. քհն. Շմավոնյանի կիսանցրու մոտ կատարվեց հոգեհանգիստ: Կիսանցրին պատրաստվել է Կալկաթայի եկեղեցական խորհրդի օժանդակությամբ և միջոցներով, բանդակագործն է Լեոն Թորմայանը: Վերջինս նույնպես ներկա էր բացման հանդիսությունը: Այս կապակցությամբ իր օրհնության խոսքն էր հղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որն ընթերցեց Մարդասիրական ճեմարանի վարչական տնօրեն Տիգրան սրկ. Բաղումյանը:

«Հնդկաստանում բնակվող մեր ժողովրդի զավակները միշտ ապրեցին Հայրենիքի և ազգի հոգսերով՝ նախաձեռնելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և Սայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինությամբ և պայծառությամբ: Հնդկահայերի առ Եկեղեցին Հայաստանյայց միրո և նվիրումի վկայությունները առատ են ինչպես Հայրենիքում, այնպես և շատ ու շատ երկրներում՝ Ռուսաստանում, Չինաստանում և այլուր:...Տ. Հարություն ավագ քահանա Շմավոնյանի կիսանցրու տեղադրումը հարգանքի արժանի տուրք է նշանավոր եկեղեցականին ու հայրենասեիրն, ինչպես նաև նրա բոլոր գործակիցներին: Այս առիթով Մեր մաղթանքն է, որ մեր ժողովրդի զավակաց հոգիներում միշտ գորավոր մնա հայրենասեր ու հավատավոր այդ ոգին, որ ծաղկեց հնդկական գաղութի ծոցում՝ ծնունդ տալով ազգաշեն բազմաթիվ իրագործումների, որոնք տակավին այսօր կենդանի են Հնդկաստանում՝ իրրև հայորդաց գործունեության բարի արգասիքներ»,-ասվում է Նորին Սրբության օրհնության խոսքում:

Կալկաթայի եկեղեցական խորհրդի անունից ներկաներին բարի գալուստ մաղթեց հնդկահայոց հոգևոր հովիվ Տ. Օշական վրդ. Գյուլգությանը՝ անդրադառնալով Տ. Հարություն ավ. քհն. Շմավոնյանի գործունեությանն ու առաքելությանը հեռավոր Հնդկաստանում:

Այնուհետև ներկաներից ողջունեց Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Քոչարյանը՝ ընդգծելով այն ավանդական ջերմ հարաբերությունները, որոնք առկա են երկու երկրների միջև և որի վառ վկայությունն է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնական այս այցը: Նա նաև երկու երկրների բարեկամական հարաբերությունների շարունակականության իբրև կարևորագույն գործոն մատնանշեց հնդկահայ գաղութի պատմական ներկայությունն այս հողի վրա՝ ընդգծելով կալկաթահայությանն ու Հայոց մարդասիրական ճեմարանին վերապահված առաքելությունը:

Ներկաներին իր խոսքով դիմեց նաև ՀՀ ԿԳ նախարար տիար Սերգո Երիցյանը՝ իր ուրախությունն արտահայտելով նվիրյալ հայորդու կիսանցրու բացման առիթով: Նա իր շնորհակալությունն հայտնեց այս գործը նախաձեռնողներին, կազմակերպիչներին ու բանդակագործին՝ ուժ և կորով մաղթելով հնդկահայոց գաղութի անդամներին:

Կեսօրին ՀՀ ԿԳ նախարարը, նրան ուղեկցող պատվիրակության անդամները և Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Քոչարյանն այցելեցին Հայոց Մարդասիրական ճեմարան: Ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգությանը բարի գալուստ մաղթեց հարգարժան հյուրերին՝ փոխանցելով Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունն ու բարեմաղթանքը: Հայր Սուրբ իր խոսքում համառոտ ներկայացրեց ճեմարանի ներկա կացությունը և այն բոլոր մարտահրավերները, որոնց առաջ կանգնած է այսօր պատմական այս հաստատությունը՝ հույս հայտնելով, որ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ և ՀՀ կրթության և գիտության նախարարության օժանդակությամբ պիտի կարողանանք օր առաջ հաղթահարել բոլոր առկա դժվարությունները: Անդրադարձ եղավ նաև հաջորդ տարի ճեմարանի 185-ամյակին նախատեսվող միջոցառումներին:

Հյուրերին բարի գալուստ մաղթեցին նաև ճեմարանի տնօրեն Զեյմս Դայասը, վարչական տնօրեն Տիգրան սրկ. Բաղումյանը՝ հույս հայտնելով, որ մեծարգո նախարարի այցը միայն ու միայն խթան և նոր լիցք պիտի հաղորդի ճեմարանի սաներին: Ճեմարանի հանդիսությունների սրահում գեղարվեստական հայտագրով հանդես եկավ ճեմարանի սաները՝ դեկլամարությամբ ելույթ ունենալով Թադեոս Թադեոսյանի:

Վերջում սաներին իր պատգամը հղեց ՀՀ ԿԳ նախարար տիար Սերգո Երիցյանը՝ անդրադառնալով կրթության և գիտելիքի կարևորությանը մարդու կյանքում:

Հյուրերն այցելեցին նաև Կալկաթայի Ս. Գրիգոր Լուսավորիչ և Տիգրան Ս. Երրորդություն եկեղեցիները:

Նույն օրը ճեմարանում հայտարարված էր նաև սպորտի օր: Ճեմարանի սաները իրենց հմտություններն ու կարողությունները դրսևորեցին զանազան մրցաձևերում: Հոդս խմբերից լավագույնը ճանաչվեց «Տիգրան» խումբը, որի անդամներն էլ արժանացան պարգևների ու մեդալների: Մեդալները հանձնեց բանդակագործ Լեոն Թորմայանը: Միջոցառմանը ներկա էին Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամները, Մարդասիրական ճեմարանի սաները և հնդկահայեր:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻՄ

Դեկտեմբերի 7-ին Վիրահայոց թեմի բոլոր եկեղեցիներում կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ 1988-ի երկրաշարժի զոհերի:

Այդ օրը մարդաշատ էր նաև Թբիլիսիի առաջնորդանիստ եկեղեցին. այստեղ էին Վրաստանում ՀՀ դեսպանատան պաշտոնյաները, Վրաստանի խորհրդարանի հայ պատգամավորները, Վրաստանի հայերի միության ներկայացուցիչները, հայկական դպրոցների մանկավարժներ ու աշակերտներ, մտավորականներ: Արարողությունը հանդիսապետում էր Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Հավատ հոգեհանգստյան պաշտոնի սրբազան հայրն իր խոսքում հայոց պատմության 1988-ի և 1990-ականների ժամանակաշրջանը համեմատեց Հին Կտակարանյան երկու մեծերի՝ Եզրաս քահանայի և Նեեմի զորավարի գործունեության ժամանակների հետ, ովքեր ավերված Երուսաղեմի տաճարը վերաշինելու համար, հարաչեպցիների հետ միասին, նետ ու աղեղը ձեռքներին, պայքարում էին թշնամիների և նելուգվելների դեմ իսկ մյուս կողմից՝ վերականգնում և հզորացնում երկիրը: Նա իր գնահատանքի և նրախտագիտության խոսքը հայտնեց առաջադեմ ողջ մարդկությանը, ի մասնավորի վրաց ժողովրդին, ովքեր հայոց ճակատագրի ամենածանր օրերին առաջիններից մեկն էին, որ օգնության ձեռք մեկնեցին:

Խոսք ասաց նաև Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, ով այդ տարիներին, Վրաստանում ղեկավարելով պետական բարձր պաշտոն, նախաձեռնել էր ադեկվատ մեծաքանակ օգնություններ:

Հոգեհանգստյան արարողությունն ավարտվեց Թբիլիսիի Սուրբ Գևորգ և Սուրբ Էջմիածին եկեղեցիների երգչախմբերի երաժշտական ծրագրերով:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈՒ ԴԻՎԱՆ

Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու բակում բացվեց հայ լրագրության հիմնադիր, «Ազդարար» ամսագրի խմբագիր Տ. Հարություն ավ. քհն. Շմավոնյանի կիսանդրին

Դեկտեմբերի 11-ին Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգությանը: Սրբազան արարողությանը ներկա էին Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամները, Մարդասիրական ճեմարանի սաները և հնդկահայեր:

Հայ լրագրության հիմնադիր և «Ազդարար» ամսագրի խմբագիր Տ. Հարություն ավ. քհն. Շմավոնյանի կիսանդրու պաշտոնական բացման արարողությանը մասնակցելու համար Կալկաթա էին ժամանել Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ ԿԳ նախարար Սերգո Երիցյանը և նրան ուղեկցող պատվիրակության անդամները, ինչպես նաև Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Քոչարյանը:

Ս. Պատարագից հետո, եկեղեցու բակում տեղադրված Տ. Հարություն ավ. քհն. Շմավոնյանի կիսանդրու մոտ կատարվեց հոգեհանգիստ: Կիսանդրին պատրաստվել է Կալկաթայի եկեղեցական խորհրդի օժանդակությամբ և միջոցներով, բանդակագործն է Լեոն Թորմայանը: Վերջինս նույնպես ներկա էր բացման հանդիսությունը: Այս կապակցությամբ իր օրհնության խոսքն էր հղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որն ընթերցեց Մարդասիրական ճեմարանի վարչական տնօրեն Տիգրան սրկ. Բաղումյանը:

«Հնդկաստանում բնակվող մեր ժողովրդի զավակները միշտ ապրեցին Հայրենիքի և ազգի հոգսերով՝ նախաձեռնելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և Սայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինությամբ և պայծառությամբ: Հնդկահայերի առ Եկեղեցին Հայաստանյայց միրո և նվիրումի վկայությունները առատ են ինչպես Հայրենիքում, այնպես և շատ ու շատ երկրներում՝ Ռուսաստանում, Չինաստանում և այլուր:...Տ. Հարություն ավագ քահանա Շմավոնյանի կիսանդրու տեղադրումը հարգանքի արժանի տուրք է նշանավոր եկեղեցականին ու հայրենասեիրն, ինչպես նաև նրա բոլոր գործակիցներին: Այս առիթով Մեր մաղթանքն է, որ մեր ժողովրդի զավակաց հոգիներում միշտ գորավոր մնա հայրենասեր ու հավատավոր այդ ոգին, որ ծաղկեց հնդկական գաղութի ծոցում՝ ծնունդ տալով ազգաշեն բազմաթիվ իրագործումների, որոնք տակավին այսօր կենդանի են Հնդկաստանում՝ իրրև հայորդաց գործունեության բարի արգասիքներ»,-ասվում է Նորին Սրբության օրհնության խոսքում:

Կալկաթայի եկեղեցական խորհրդի անունից ներկաներին բարի գալուստ մաղթեց հնդկահայոց հոգևոր հովիվ Տ. Օշական վրդ. Գյուլգությանը՝ անդրադառնալով Տ. Հարություն ավ. քհն. Շմավոնյանի գործունեությանն ու առաքելությանը հեռավոր Հնդկաստանում:

Այնուհետև ներկաներից ողջունեց Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Քոչարյանը՝ ընդգծելով այն ավանդական ջերմ հարաբերությունները, որոնք առկա են երկու երկրների միջև և որի վառ վկայությունն է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնական այս այցը: Նա նաև երկու երկրների բարեկամական հարաբերությունների շարունակականության իբրև կարևորագույն գործոն մատնանշեց հնդկահայ գաղութի պատմական ներկայությունն այս հողի վրա՝ ընդգծելով կալկաթահայությանն ու Հայոց մարդասիրական ճեմարանին վերապահված առաքելությունը:

Ներկաներին իր խոսքով դիմեց նաև ՀՀ ԿԳ նախարար տիար Սերգո Երիցյանը՝ իր ուրախությունն արտահայտելով նվիրյալ հայորդու կիսանցրու բացման առիթով: Նա իր շնորհակալությունն հայտնեց այս գործը նախաձեռնողներին, կազմակերպիչներին ու բանդակագործին՝ ուժ և կորով մաղթելով հնդկահայոց գաղութի անդամներին:

Կեսօրին ՀՀ ԿԳ նախարարը, նրան ուղեկցող պատվիրակության անդամները և Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Քոչարյանն այցելեցին Հայոց Մարդասիրական ճեմարան: Ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգությանը բարի գալուստ մաղթեց հարգարժան հյուրերին՝ փոխանցելով Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունն ու բարեմաղթանքը: Հայր Սուրբ իր խոսքում համառոտ ներկայացրեց ճեմարանի ներկա կացությունը և այն բոլոր մարտահրավերները, որոնց առաջ կանգնած է այսօր պատմական այս հաստատությունը՝ հույս հայտնելով, որ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ և ՀՀ կրթության և գիտության նախարարության օժանդակությամբ պիտի կարողանանք օր առաջ հաղթահարել բոլոր առկա դժվարությունները: Անդրադարձ եղավ նաև հաջորդ տարի ճեմարանի 185-ամյակին նախատեսվող միջոցառումներին:

Հյուրերին բարի գալուստ մաղթեցին նաև ճեմարանի տնօրեն Զեյմս Դայասը, վարչական տնօրեն Տիգրան սրկ. Բաղումյանը՝ հույս հայտնելով, որ մեծարգո նախարարի այցը միայն ու միայն խթան և նոր լիցք պիտի հաղորդի ճեմարանի սաներին: Ճեմարանի հանդիսությունների սրահում գեղարվեստական հայտագրով հանդես եկավ ճեմարանի սաները՝ դեկլամարությամբ ելույթ ունենալով Թադեոս Թադեոսյանի:

Վերջում սաներին իր պատգամը հղեց ՀՀ ԿԳ նախարար տիար Սերգո Երիցյանը՝ անդրադառնալով կրթության և գիտելիքի կարևորությանը մարդու կյանքում:

Հյուրերն այցելեցին նաև Կալկաթայի Ս. Գրիգոր Լուսավորիչ և Տիգրան Ս. Երրորդություն եկեղեցիները:

Նույն օրը ճեմարանում հայտարարված էր նաև սպորտի օր: Ճեմարանի սաները իրենց հմտություններն ու կարողությունները դրսևորեցին զանազան մրցաձևերում: Հոդս խմբերից լավագույնը ճանաչվեց «Տիգրան» խումբը, որի անդամներն էլ արժանացան պարգևների ու մեդալների: Մեդալները հանձնեց բանդակագործ Լեոն Թորմայանը: Միջոցառմանը ներկա էին Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամները, Մարդասիրական ճեմարանի սաները և հնդկահայեր:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժինը տեղեկացնում է, որ սույն թվականի դեկտեմբերի 1-4-ը Ֆինլանդիայի Ֆարվենաա քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի «Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախմբի ուղղափառ անդամների եւ Պորվուի Հաղորդության (Անգլիկան Եկեղեցիների եւ Սկանդինավյան ու Բալթյան երկրների Լութերական միություն) Եկեղեցիների ներկայացուցիչների հանդիպումը:

Հանդիպման նպատակն Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների եւ Պորվուի Հաղորդության միջեւ աստվածաբանական համաձայնության ձեռք բերելն էր:

Այս հանդիպմանը Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացնում էր Հոլանդիայի հայոց հոգեւոր հովիվ Հոգեշնորհ Տ. Տաթվող. Հակոբյանը:

Իսկ սույն թվականի դեկտեմբերի 8-9-ը Բրյուսելում (Բելգիա) տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի նախաձեռնած կոնֆերանսը՝ գլոբալիզացիայի գործընթացների վերաբերյալ: Այն մասնավորաբար քննարկեց ԵԵԿ «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի գործառի կոմիտեի կողմից գլոբալիզացիայի վերաբերյալ պատրաստված փաստաթուղթը:

Կոնֆերանսին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացրեց Տ. Վազգեն աբեղա Սանյանը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածին
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
Ս. Էջմիածնի ԲԿ եւ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան
Գրանցված վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
ք. Վաղարշապատ, ԲԿ
Հեռախոս՝
(0+231) 54510
Ստորո. տպագր. 17. 12. 2005 թ.
Տպաքանակը՝ 2500
Գինը՝ 50 դրամ